

ՂԱՒՈՒԹՕՂՆՈՒ. «ԹՈՂ ՉՍՊԱՍԵՆ, ՈՐ ՄԵՆՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՎԱԵՐԱՑՆԵՆՔ ԱՊՐԻԼԻ 24-Ի ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ»

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Դաուդթոլու խիստ քննադատութեան ենթարկած է Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի ընդգրկումը Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի օրակարգէն ներս:

Թուրք նախարարը լրագրողներուն, մասնաւորապէս, յայտնած է, որ թրքական կողմը իր անհանգստութիւնները փոխանցած է Միացեալ Նահանգներու պետական փոխարտուղար ձէյնս Սթայնպըրկին:

«Մենք անոնց ըսինք, որ իրենք կրնան Գոնկրէսի մէջ տեղի ունեցածը պատահականութիւն նկատել, սակայն մեր կարծիքով այդ բոլորովին ալ պատահական չէ», - ըսած է Դաուդթոլու:

Անցնող շաբաթուայ ընթացքին յայտնի դարձաւ, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչման թիւ 252 բանաձեւը ԱՄՆ-ի Գոնկրէսի Ներկայացուցիչներու Տան արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովէն ներս քուէակրութեան պիտի դրուի Մարտի 4-ին:

«Վերջին շաբաթներուն որոշ յաջորդականութեամբ ընթացող զարգացումները մեզ լրջօրէն կ'անհանգստացնեն», - ըսած է Դաուդթոլու ու աւելցուցած. - «Նախ Հայաստանի Սահմանադրական դատարանը մեզի համար անընդունելի մեկնաբանութիւններ կատարեց ստորագրուած արձանագրութիւններու վերաբերեալ: Ապա, Սոչիի մէջ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ Սերժ Սարգսեանի միջեւ կայացած հանդիպման ընթացքին հայկական կողմը նահանջեց կառուցողական դիրքորոշումներէն: Այժմ ալ ԱՄՆ-ի Գոնկրէսի օրակարգ կը մտնէ այսպիսի օրէնսդրական նախաձեռնութիւն»:

ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՅԵՏԱԶԳՈՒԵԼԷ ԵՏՔ, ՓՈՒՍԱԴԱՐՁ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ

Ամերիկահայ շարք մը կազմակերպութիւններ հրաւեր ստացած էին Փետրուար 9-ին ներկայ գտնուելու Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Բլինթընի հետ հանդիպումի մը՝ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն շուրջ:

Հանդիպումը վերջին պահուն յետաձգուած է, ըստ պաշտօնական բացատրութեան, մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ խիստ ցուրտ եղանակին պատճառաւ: Սակայն, ի յայտ կու գայ թէ, յետաձգման մէջ դեր ունեցած են նաեւ հայկական կազմակերպութիւններու միջեւ ծագած վէճերը:

Ամերիկայի Հայկական Համագումարը եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը հան-



Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Դաուդթոլու

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը յայտարարած է, թէ վերոյիշեալ երեք իրադարձութիւններու յաջորդականութիւնը մտածելու առիթ կու տայ, որ «այս ամէնը պատահականութիւն չէ»:

«Ինչո՞ւ այս [Յեղասպանութեան ճանաչման] հարցը օրակարգ կը մտնէ հիմա: Թող մեզմէ արձանագրութիւններու վաւերացում չսպասեն, որպէս ճնշման գործօն օգտագործելով Ապրիլ 24-ը», - յայտարարած է Դաուդթոլու: - «Այս բանաձեւի ներառումը օրակարգ չի բխիր ոչ ԱՄՆ-ի, ոչ Թուրքիայի, ոչ ալ Հայաստանի շահերէն: Այս գործընթացը կրնայ փակուողի առաջ կանգնեցնել ԱՄՆ-ի հետ մեր երկկողմ յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Թուրքիոյ եւ Հայաստանի մերձեցման գործընթացը, որ մենք այս մակարդակին հասցուցած ենք մեծ ջանքերու գնով: Ուաշինկթըն պէտք է աւելի մեծ ուշադրութեամբ մօտենայ մեզ համար զգալուն հարցերուն», - ըսած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Դաուդթոլու:

դէս եկան յայտարարութեամբ մը, մեղադրելով ՀՅԴ Հայ Դատի Յանձնախումբը, հրաւիրուած կազմակերպութիւններու հասցէին սխալ տեղեկութիւններ տարածելու եւ համայնքէն ներս բաժանում ստեղծելու մէջ:

Երկու կազմակերպութիւնները նաեւ կը տեղեկացնեն, որ Հայ Դատի Յանձնախումբը մերժած է մասնակցել խորհրդակցական հանդիպումի մը՝ չորս կազմակերպութիւններ եւս ներգրաւելու եւ միացեալ կեցուածք որդեգրելու շուրջ:

Հայ Դատի Յանձնախումբը իր կարգին յայտարարած էր որ, Քլիթընի հետ հանդիպումի հրաւիրուած կազմակերպութիւնները չեն կրնար ներկայացնել համայնքի ընդհանուր կարծիքը:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԻՆ ԿՈՉ ԸՐԱԾ Է «ՎՈՒԿԱՆՈՒԹԻՒՆ» ՑՈՅՑ ՏԱԼ

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան Թուրքիոյ նախագահ Ապտուլա Կիլիւն ուղղուած նամակին մէջ կոչ ըրած է ցոյց տալ վճռականութիւն եւ արագացնել հայ-թրքական յարաբերութիւնները կարգաւորող արձանագրութիւններու վաւերացման գործընթացը:

Նախագահի մամլոյ գրասենեակի տարածած հաղորդագրութեան համաձայն, Սերժ Սարգսեան իր ուղերձը յղած է Փետրուար 9-ին Թուրքիոյ օդային տարածքով Մեծն Բրիտանիա ճամբորդելու ընթացքին: Յիշեցնելով, որ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները կարգաւորելու նախաձեռնութիւնը կը գտնուի միջազգային հանրութեան ուշադրութեան կիզակէտին, Սարգսեան ընդգծած է, որ երկկողմ յարաբերութիւններու բարելաման գործին մէջ ներգրաւուած «բարեկամ պետութիւնները», որքան ալ շահագրգռուած ըլլան գործընթացի դրական հանգուցալուծման մէջ, չեն կրնար ընել այն, ինչ ի գօրու են ընելու երկու ժողովուրդները:

«Հայ եւ Թուրք ժողովուրդների միջեւ եղած պատուարը կոտրելու, փոխվստահութեան մթնոլորտ ձեւաւորելու խնդրում հիմնական դերը վերապահուած է իշխանութիւններին: Միայն մեր գործի հանդէպ ունեցած հաւատի, վճռականութեան եւ սկզբունքայնութեան շնորհիւ մենք կարող ենք հասնել արդիւնքի», - ըսած է Սարգսեան ու աւելցուցած. - «Այլապէս, երբ հակասում են գործն ու խօսքը, դա ծնում է անվստահութիւն եւ թերահաւատութիւն՝ գործունէութեան լայն դաշտ բացելով գործընթացին դէմ ուժերի համար»:

Նախագահը նաեւ ակնկալած է, որ հայ-թրքական արձանագրութիւններու վաւերացումը պէտք է արագացնել. «Մենք պէտք է զիտակցենք, որ ժամանակն այս դէպքում ոչ թէ նպաստում է գործընթացին, այլ՝ իմաստազրկում այն»:

«Եթէ մինչ այս պահը մեզ յաջողուել է երկկողմ շփումները բերել այնպիսի մակարդակի, որ տեղից շատ աւելի տեսանելի ու շօշափելի է դառնում մեր երկրներին միջեւ բնական յարաբերութիւնների կառուցման ապագան, ապա այսօր պահն է հանդէս բերելու վճռականութիւն, կատարելու մեծ քայլ առաջ՝ ապագայ սերունդներին ժառանգելով կայուն ու անվտանգ տարածաշրջան», - եզրափակած է Սերժ Սարգսեան:

ՏԻԱՐՊԷՔԻՐԻ ՔԻՐՈՏ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԱԾ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԵՆ

Տիարպէքիրի քաղաքապետ Օսման Պայտեմիր ներողութիւն խնդրած է Թուրքիոյ արեւելեան շրջաններուն մէջ ժամանակին խիստ բնակչութիւն ունեցող ժողովուրդներէն, յատկապէս հայերէն: Այս մասին կը տեղեկացնէ թրքական «Սապահ» օրաթերթը:

«Ժամանակին Միջագետքի մէջ կը բնակէին ասորիներ, հայեր, քիւրտեր եւ այլ ժողովուրդներ, որոնք իրենց հաւատացեալ ինքնութեամբ երջանկութեան, հանդուրժողականութեան, խաղաղութեան խորհրդանիշ էին: Սակայն ոմանք եկան եւ երկար տարիներ մեզ ղեկավարեցին: Մարդիկ ստիպուած եղան այստեղէն գաղթել:

«Մեծ ցաւով կ'ըսեմ այս, Տիարպէքիրի մէջ ապրող հայ ընտանիքներու թիւը երեքէն աւելի չէ, այն պարագային, երբ 120 տարի առաջ անոնք բնակչութեան 40%-ը

է, որ հայ-թրքական արձանագրութիւններու վաւերացումը պէտք է արագացնել. «Մենք պէտք է զիտակցենք, որ ժամանակն այս դէպքում ոչ թէ նպաստում է գործընթացին, այլ՝ իմաստազրկում այն»:

«Եթէ մինչ այս պահը մեզ յաջողուել է երկկողմ շփումները բերել այնպիսի մակարդակի, որ տեղից շատ աւելի տեսանելի ու շօշափելի է դառնում մեր երկրներին միջեւ բնական յարաբերութիւնների կառուցման ապագան, ապա այսօր պահն է հանդէս բերելու վճռականութիւն, կատարելու մեծ քայլ առաջ՝ ապագայ սերունդներին ժառանգելով կայուն ու անվտանգ տարածաշրջան», - եզրափակած է Սերժ Սարգսեան:

Փետրուար 10-ին Լոնտոնի Միջազգային յարաբերութիւններու թագաւորական ինստիտուտին ներս իր ունեցած ելոյթի ժամանակ Սերժ Սարգսեան յայտնեց, որ վերջին մէկ տարուայ ընթացքին Հայաստան եւ Թուրքիա յառաջընթաց արձանագրած են յարաբերութիւններու կարգաւորման հարցով, եւ հայկական կողմը պատրաստ է առանց նախապայմաններու սահմաններու բացմանը: Ան նոյնիսկ պատրաստակամութիւն յայտնեց հրաւիրել Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւին՝ հայ-թրքական սահմանի բացման:

Սարգսեան յայտարարեց, որ իր աշխատակիցներուն պիտի հրահանգէ արձանագրութիւնները փաթեթը ուղարկել Ազգային ժողով՝ վաւերացման գործընթացը սկսելու համար: «Բայց եթէ հաստատուին կասկածները, թէ Թուրքիա կը փորձէ ընդամենը ժամանակ շահիլ, մենք ստիպուած կ'ըլլանք դադարեցնել գործընթացը», - յայտարարեց ան:



Տիարպէքիրի քաղաքապետ Օսման Պայտեմիր

կը կազմէին: Որեւէ ներողութիւն չի կրնար թեթեւցնել այդ ողբերգութիւնը: Այո, մեծ ցաւ ապրած էք, ստիպուած էք գաղթել: Սակայն վստահ եղէք, որ դուք չէք կորսնցուցած, այլ մենք է որ կորսնցուցած ենք: Երջանկութիւնն ու խաղաղութիւնն ալ ձեզի հետ տարիք», - յայտարարած է քաղաքապետ Օսման Պայտեմիր:

ՏԵՍԱԿԵՏ

ՕՐՈՒՄԱՆ ԸԱՐՅԵՐՈՒՆ ԸՏԵ
ՔՈՉԱՐԵԱՆԻ ՈՒ ՍԱՐԳՍԵԱՆԻ
ԸԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Եթէ հարց տրուի թէ ո՞րն է այն երկիրը որու ղեկավարները պաշտօնի կողմէն իրենց համեմատ կարողութիւններով եւ հասցի կը հեռանայ որպէս միջադեպ, եւ եթէ ձեռք պատասխանը Հայաստանն է՝ դուք ճիշդ էք:

Վերջերս Ռուսական «Վերսիա» թերթը, «Ինչու համար Հայաստանի ժողովուրդի կեանքը բարելաւելու բոլոր փորձերը մատնուած են ձախողութեան» խորագիրին տակ հրատարակեց (Տեսնել «Մասիս» նախորդ թիւի անգլերէն բաժինը) Հայաստանի իշխանաւորներու եւ յատկապէս Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի «աչք ծակող» հարստութեան մասին յօդուած մը, մէկ առ մէկ չի շարունակել իրենց լուրերը, կայուածներու, հանքերու, դրամատուներու, խանութներու, հիւրանոցներու եւ բազմաթիւ այլ բնագաւառներու մէջ անոնց պատկանող եւ ընդհանրապէս ընտանիքի անդամներու անուններուն արձանագրուած հաստատութիւններու ցուցակը:

Երեւանի մէջ շրջագայութեան ընթացքին թաքսիի վարորդներէն յաճախ կը լսէք, թէ այս շէնքը կը պատկանի այսինչին եւ այս խանութը այնինչին, առանց նկատի առնելու այդ բոլորի իսկական տարողութիւնը: Սակայն, այն ինչ կատարած է յօդուածագիր Իկոր Փեթրով, մանրամասն ցուցակագրելով աւելի քան տասնամեակէ մը ի վեր երկիրը ղեկավարող երկու անձներու՝ Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի պատկանող հարստութիւնը, կու գայ ցոյց տալու որ, ոչ միայն կողոպտուած է ամբողջ երկիրը, այլ նաեւ այդ բոլորը կեդրոնացուած է փոքրաթիւ խմբակի մը ձեռքերուն մէջ:

Ըստ յօդուածագիրի, Քոչարեան իր ձեռքերուն մէջ կեդրոնացուցած է ազգային եկամուտի հետեւեալ աղբիւրները.

- Պետական հարկերու ոլորտը
- Հաղորդակցութեան միջոցները

-Շինարարութիւնը

-Կազմի մատակարարումը

-Թանկարժէք քարերու արտադրութիւնը եւ արտահանումը

Իսկ մանրամասնելով՝ յօդուածը կը ներկայացնէ Քոչարեանի սեփականութիւնը եղող հաստատութիւններու անունները, որոնց բոլորի չիշատակումը այստեղ, պիտի գրաւէր մեր ամբողջ սիւնակը: Քոչարեանին պատկանող գործերու շարքին են «Արցախպանքը», «Երուսիմի», «Քոնվերս» պանքը, «Արդշինին-վեստ» պանքը, «Նաիրի» բժշկական կեդրոնը, «Ղ-Տելեկոմը», «Արարատցեմենտը», «Հ2»-ը հեռատեսիլի ալիքը, «SAS» սուփը-մարքեթներու ցանցը, «Արմանի», «Ստեֆանո» եւ «Ռիչչի» սուղոնոց ապրանքներու խանութները, «Պինչին» շինարարութեան ընկերութիւնը, շարժական հեռախօսներու ներածման շուկայի 80 տոկոսը, «Վիվասել» հեռախօսի ընկերութիւնը, Երեւանի «Կոլտըն Փալաս» հիւրանոցը, Մոսկուայի մէջ քաղինո մը եւ այլն, եւ այլն:

Այդ եւ այլններուն մէջ կ'իջ-

նայ նաեւ Երեւանի «Չուարթնոց» օդակայանի 50 տոկոսը: Ինչպէս ծանօթ է, Քոչարեանի օրով «Չուարթնոցը» երկարատեւ վարձակալութեամբ յանձնուեցաւ Արժանթինասայ գործարար էտուարտո Էռնէսքեսանին: Եթէ ճիշդ են «Վերսիայի» տեղեկութիւնները, կարելի է եզրակացնել, որ սփիւռքահայ գործարարը օդակայանի կէսը որպէս կաշառք վերադարձուցած է երկրի գործող նախագահին:

Եթէ բաղդատելու ըլլանք Քոչարեանի հետ, Սերժ Սարգսեանի ունեցուածքը աւելի «համեստ» է: Անոր կը պատկանի Հայաստանի խոշորագոյն ընկերութիւններէն «Ֆլէշ» կէսը, պէնզինի կայարաններու ցանց մը, Ղարաբաղի մէջ գինիի արտադրութեան երեք գործարան, «Արարատ» պանքը, «Արարատ» ճաշարաններու ցանցը (թիւով 30 հատ), «Արմախի» օդանաւի ընկերութիւնը, եւ այլն:

Յօդուածի հրատարակումէն ետք, Քոչարեանի մամուլի խօսնակը բաւարարուեցաւ թերթերէն մէկուն տրուած, հեզնական մօտեցումով հերքումով մը, իսկ նախագահական պալատը լուր-թեամբ դիմաւորեց այս խիստ մտահոգիչ տեղեկութիւնները: Խորհրդարանական ու արտախորհրդարանական ընդդիմադրութիւնը եւս լուռ անցաւ այս բոլորի վրայէն, երբ այլ երկիրներու պարագային սկանդալային վիճակ ստեղծուած պիտի ըլլար ու անմիջապէս պիտի կազմուէր խորհրդարանական եւ կամ այլ անկախ յանձնախումբ՝ ժխտելու եւ կամ հաստատելու տրուած տեղեկութեանց իրողութիւնը:

Այս բոլորի բացակայութեամբ, Հայաստանի ժողովուրդի մօտ ոչ միայն կը խորանայ անվստահութիւնն ու թերահաւատութիւնը իր երկրի ու ղեկավարութեան հանդէպ, այլ զգուանք յառաջացնելով, յատկապէս երիտասարդութիւնը կը մղէ արտագաղթելու: Իսկ, սփիւռքահայեր, որոնք հայրենասիրական մղումներով կ'ուզեն օգտակար ըլլալ իրենց հայրենիքին, կը մատնուին յուսախաբութեան ու կը սկսին երես դարձնել անոր:

«Վերսիայի» մէջ լոյս տեսած յօդուածի խորագիրը եզրակացութիւնն է յօդուածի բովանդակութեան: Հայաստանի բնակչութեան տնտեսական ու ընկերային վիճակը չի կրնար բարելաւուիլ, երբ երկրէն ներս կը տիրէ նման աստիճանի անբարոյականութիւնն ու կ'իշխէ օրէնքներու ու սեփական ժողովուրդը արհամարհելու տրամադրութեամբ շարժող ղեկավարութիւն:

Յաճախ հարց կը տրուի, թէ ի՞նչու պատահեցաւ Մարտի 1-ը երբ 10 քաղաքացիներ գնդակահարուեցան Երեւանի փողոցներուն վրայ: Պատճառներէն մէկն ալ կարելի է գտնել «Վերսիայի» գրութեան մէջ: Մարդիկ ոչ միայն կը պաշտպանէին իրենց աթոռները, այլ նաեւ իրենց հարստութիւնը, որ շատ աւելի կարեւոր էր իրենց համար, քան երկրի ապագան ու անոր բարօրութիւնը:

Այս է Հայաստանի այսօրուայ դժբախտ իրականութիւնը:

«ՖՈՒԹՐՈՒԱՅԻՆ» ԴԻԿԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ
ՄԵԾԱՑՐԵԼ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԸԱԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր ունեցած տեղեկութիւններով, Սոչիում կայացած Սերժ Սարգսեան, Դմիտրի Մեդվեդեւ, Իլհամ Ալիեւ եւ Եւրոպայի հանդիպման ժամանակ քննարկուած դարաբաղեան հակամարտութեան փաստաթղթին առաջին անգամ աղբրեջանական կողմը համաձայնութիւն է տուել: Այդ քայլը բաւական շուկային է եղել Սերժ Սարգսեանի համար, ում մարտավարութիւնը մինչ այդ եղել է հետեւեալը, համաձայնել համանախագահների բոլոր առաջարկներին այն հաշուարկով, որ Իլհամ Ալիեւը չի համաձայնի որեւէ փաստաթղթի, որտեղ նոյնիսկ տեսականօրէն խօսք կը գնայ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման մասին:

Սոչիում, սակայն, Ալիեւը փոխել է նախկինում ունեցած իր դիրքորոշումը եւ համանախագահներին սակ, որ պարտաստ է ստորագրել ներկայացուած փաստաթղթի իւրաքանչիւր բառի տակ: Այդպիսով Սերժ Սարգսեանը յայտնուել է բաւական անելանելի վիճակում, քանի որ այդ փաստաթղթով նախատեսուած է ազատագրուած 7 շրջաններից հայկական զորքերի դուրսբերում, փախստականների վերադարձ իրենց նախկին բնակութեան վայրեր, ընդամենը Լաչինի միջանցքի առկայութիւն եւ Լեռնային Ղարաբաղի հետագայ կարգավիճակի որոշման հարաւորութիւն:

Երկազբաթեայ ժամկէտը, որ տրուել է Հայաստանի եւ Աղբրեջանի ղեկավարութեանը Սոչիի հանդիպումից յետոյ, ըստ էութեան, հայկական կողմի ցանկութիւնն է եղել: Այդ ժամանակահատուածն այժմ իշխանութիւններն օգտագործում են, որպէսզի ներկայացնեն իրենց վերապահումները Սոչիում քննարկուած փաստաթղթի կապակցութեամբ, որով պէտք է փորձեն ձախողել համաձայնութիւնը: Այ-

սինքն, Սերժ Սարգսեանը գնալու է դիրքորոշման կոշտացման, որն այս պահին օբեկտիւօրէն միակ ճիշդ տարբերակն է, քանի որ Սոչիում ներկայացուած փաստաթուղթն, ըստ էութեան, հայկական կողմի կապիտուլյացիա է նշանակում, եւ այն ընդունել չի կարելի:

Առաջիկայ օրերին արդէն պարզ կը դառնայ, թէ ինչ մօտեցում է ցուցաբերել Հայաստանի դիւանագիտութիւնը: Երկազբաթեայ ժամկէտն արդէն մօտենում է աւարտին:

Մի շարք վերլուծաբանների կարծիքով դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացը կարող է մտնել փակուղի, որն էլ կը մեծացնի պատերազմի վերսկսման հաւանականութիւնը: Խօսքն առաջիկայ ամիսների մասին է:

Տեղեկացնենք, որ դարաբաղաւորեցնական շփման գծում արդէն իսկ առկայ է հրադադարի ռեժիմի խախտման ռիսկերի աճ: Երկուստեք կան գոհեր եւ վիրաւորներ: Հայկական կողմի ունեցած կորուստների մասին «7օր»-ը կը փորձի ճշդել համապատասխան մարմիններից:

Ի դէպ, հայ-թուրքական գործընթացի մասին արդէն բոլորն էլ մոռացել են, եւ կողմերի ուշադրութիւնը հիմա սեւեռուած է միայն Արցախի վրայ: Այսինքն, վերջնականապէս հաստատուեց այն պնդումը, որ հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացման գործընթացը թուրքական կողմն ի սկզբանէ Արցախի նախապայմանով էր սկսել, եւ այդ ուղղութեամբ տեղի էին ունենալու ակտիւ գարգացումներ, ինչի ականատեան ենք այժմ:

« 7 Օր »

ՅԱԲԱԼԻ Է

«Առաւօտի» խմբագրականը գրում է.- «Ցաւալի է, իհարկէ, որ բանավէճն այն մասին, թէ ով է իրական ընդդիմութիւնը, տեղափոխուել է Եւրոպայի խորհուրդ: Լաւ կը լինէր, որ մեր քաղաքական ուժերը այդ հարցը լուծէին երկրի ներսում: Թէ չէ, ստացում է, որ մենք եւրոպացի պաշտօնեաներից խնդրում ենք լուծել մի խնդիր, որը պարտաւոր է լուծել մեր հասարակութիւնը: Նոյն տրամաբանութեամբ, ի դէպ, չարժեք տալով շիւրթի Քլինթոնի հետ հայ համայնքի հանդիպումը, այն պատճառով, որ ԱՄՆ-ի պետքարտուղարը հայկական կազմակերպութիւնների մի մասին հրաւիրել է, իսկ միւսին՝ ոչ, եւ այդ միւս մասը նեղացել է, գտնելով, որ նա աւելի հեղինակաւոր է, քան հրաւիրուածները: Մի խօսքով, տիպիկ ներհայկական «ուզեցողիկ», որին օտարներին ականատես դարձնելն այնքան էլ ցանկալի չէ:

Մարդու իրաւունքների, խօսքի ազատութեան, քաղաքացիական իրաւունքների խնդիրները, բնականաբար, պէտք է բարձրացնել Արեւմուտքի առաջ, մեր իշխանութիւններին գոնէ մի փոքր զգաստացնելու, զսպելու համար: Այլ է, մանաւորապէս, ընդդիմութիւն լինել-չլինելու խնդիրը, այստեղ եւրակառուցները մեզ որեւէ ձեւով օգտակար լինել չեն կարող:

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ
ՍԱՅԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail),
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԶԻ ԲԱՑԱՌՈՒՄ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՊԱՏԺԱԺԱՄԿԵՏԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

«ԱԶՏԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՏՈ»։ Արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանն Երկուշաբթի հերթել է մամուլում տեղ գտած այն տեղեկատվությունը, համաձայն որի Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուէր Բեյլանի հետ անցած շաբաթ տեղի ունեցած հանդիպման ժամանակ ինքը ասել է, թե Նիկոլ Փաշինյանի նկատմամբ կարող է համաներում կիրառվել, եւ որ հնարավոր է դէպքերի նոր զարգացում:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց նախարար Գեորգ Դանիելյանի մամուլի քարտուղար Լանա Մշեցեանը, նախարարի խօսքը մամուլում ճշգրիտ չի արտացոլուել: Ըստ Մշեցեանի, Արդարադատության նախարարը բառացիորէն ասել է հետեւեալը. - «Համաներման կիրառում է համարում ոչ միայն պատժից ազատելը, այլեւ նշանակուած պատժի ժամկետը կրճատելը: Վերջնական դատավճռի պարագայում պարզ կը դառնայ, թէ կա՞նք արդեօք բաւարար հիմքեր համաներում կիրառելու համար, եւ կոնկրետ ի՞նչ չափով պատիժը կարող է կրճատուել»:

Յունուարի 19-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանը ընդդիմադիր գործիչ, «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինյանին մեղաւոր ճանաչեց

2008 թուականի նախագահական ընտրութիւններից յետոյ զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու մէջ եւ դատապարտեց 7 տարուայ ազատազրկման:

Մեկնաբանելով Արդարադատության նախարարի խօսքերը՝ Նիկոլ Փաշինյանի փաստաբան Լուսինէ Սահակեանը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, որ ընդհանուր իրաւասութեան դատարանը պարտաւոր էր Նիկոլ Փաշինյանին արդարացեալ, կամ, առնուազն, նրա նկատմամբ համաներում կիրառել: Համաձայն համաներում յայտարարելու մասին Ազգային ժողովի որոշման՝ 2008 թուականի Մարտի 1-2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձութիւնների առնչութեամբ յանցագործութիւն կատարած անձանց պատժաչափի չկրած մասը կարող է կիսով չափ կրճատուել: Փաստաբանի պնդմամբ, Փաշինյանի պատժի ժամկետը պէտք է կրճատուէր եւ վերջնական պատիժ սահմանուէր 3.5 տարի, ինչը դատաւորը չի արել, իսկ դա նշանակում է, որ կայացուած դատական ակտը հակասում է օրէնսդրութեանը:

Նիկոլ Փաշինյանի շահերի պաշտպան Լուսինէ Սահակեանը պատրաստուած է մինչեւ Փետրուարի 19-ը բողոք ներկայացնել Վերաքննիչ դատարան՝ վիճարկելով ընդհանուր իրաւասութեան դատարանի կայացրած վճիռը:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆԸ» ԼՐԱՏՈՒԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ

«Tert.am»: Վերջին շրջանում իշխանութիւններն էլ աւելի են խստացրել «Ժառանգութեան» լրատուական շրջափակումը՝ թոյլ չտալով, որ որեւէ հեռուստաընկերութեամբ հասարակութեանը լիարժէք հասու դառնան «Ժառանգութեան» տեսաէջերը հայ-թուրքական շարաբերութիւնների, Արցախի խնդրի շուրջ զարգացումների վերաբերեալ:

Այս մասին ասել է «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Արմէն Մարտիրոսեանը Փետրուարի 7-ի «Խորհրդարանական շաբաթ» հաղորդման շրջանակներում: «Աւելին, իշխանութիւններն ապօրինի որոշումներ եւ քայլեր են կատարել՝ թոյլ չտալով ժողովրդի ձայնը «Ժառանգութեան» միջնորդաւորմամբ հնչեցնել այնպիսի հեղինակաւոր ամբիոններից, ինչպիսիք են Եւրախորհուրդը եւ ԵԱՀԿ-ն: Ինչպէս տեղեակ էք, իշխանութիւնների աճպարարութիւնների եւ ձեռնածութիւնների հետեւանքով խոչընդոտում է «Ժառանգութեան» պատգամաւորներին ազգանպաստ աշխատանքն այդ կառույցներում», - նշել է պատգամաւորը:



«Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Արմէն Մարտիրոսեան

Ըստ «Ժառանգութեան» ներկայացուցչի՝ «սեփական կամայականութիւնները քողարկելու նպատակով՝ իշխանութիւններն իրենց սպասարկու լրատուամիջոց-կամատարներին միջոցով հերթական հիատերիան են բարձրացրել «Ժառանգութեան» դէմ, սկսել են «հանդուրժողականութեան դասեր» տալ եւ խօսել ինչ-որ «զաւաճանութիւնից», «հակապետական գործունէութիւնից»: Արմէն Մարտիրոսեանը նաեւ յաւելել է, որ այս ամէնն ուղեկցում է «Ժառանգութիւն» կուսակցութեան գործունէութեան սահմանափակմանն ուղղուած կոչերով:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԱԶԳԱՅԻՆ ՅԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐՈՒՄ

«haynews.am»: «Քաղաքացիական ազգային նախաձեռնութիւն» հասարակական կազմակերպութիւնն այսօր հրաւիրել էր երիտասարդներին եւ տարբեր քաղաքական ուժերին՝ քննարկելու հայ-թուրքական շարաբերութիւններն ու Յիւրիխեան արձանագրութիւնները: Յատկանշական է, որ հանդիպմանը ներկայացել էին միայն Հնչակեան եւ «Ժառանգութիւն» կուսակցութիւնների ներկայացուցիչները:

«Միայն այս կուսակցութիւնները, փաստօրէն, առաջնահերթ համարեցին հայ-թուրքական արձանագրութիւնների քննարկումը», - ասաց ներկայ երիտասարդներից մէկը:

Ներկայ բոլոր երիտասարդները ողջունեցին ՄԴՀԿ «Սարգիս Տիրուհի» ուսանողական-երիտասարդական միութեան ատենապետ Գագիկ Մելիքեանի հետեւեալ խօսքերը. «Մեզ այսօր անհրաժեշտ է ընդամենը բարձրացնել մեր ազգային ինքնագիտակցութեան գաղափարը: Եթէ բարձրացրեցինք, ուրեմն ամէն մի հարց էլ կարող ենք լուծել»: Ըստ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցչի՝ «կան երիտասարդներ, ովքեր լրիւ անտարբեր են կամ տեսնում են այս գործընթացում միայն իրենց շահերը, պէտք է տեղեկացնել հասարակութեան բոլոր շերտերին հնարաւոր վտանգների մասին»:

«Արձանագրութիւնները հնարաւորութիւն տուեցին թուրքիային ձեռք բերել յաւելեալ լծակներ՝ դարաբաղեան հիմնահարցի կարգաւորման հարցում Հայաստանի վրայ նոր ճնշումներ կիրառելու համար», - ասաց Գ.Մելիքեանն իր զեկոյցում:

Իսկ ժառանգութեան ներկայացուցիչն իր զեկոյցում ներկայացրեց ողջ տարածաշրջանի երկրների բնութագրերն ըստ իրեն, օրինակ նշելով՝ «ասել, որ թուրքիան ժողովրդավարական երկիր է, սխալ կը լինի, բայց այնտեղ ի տարբերութիւն տարածաշրջանի միւս



ՄԴՀԿ «Սարգիս Տիրուհի» ուսանողական-երիտասարդական միութեան ատենապետ Գագիկ Մելիքեան

երկրների՝ ընտրութիւնները չեն կեղծուած»:

«Թուրքիան հասել է նրան, ինչ ուզում էր, ապացոյցն այն է, որ այսօր նա բացում է Ախթամարը որպէս ներկայարան, եւ դա եւրոպական երկրների կողմից դրական քայլ է դիտուում: Այս ամէնից յետոյ արձանագրութիւնների վաւերացումն անորոշ հարց է», - ասաց Գ. Մելիքեանը:

Մինչդեռ Դանիել Իոնեսեանը գտնում է, որ «ի վերջոյ թուրքիան կը վաւերացնի այս գործընթացը, բայց ըստ ամենայնի՝ ապրիլի 24-ից յետոյ»:

Այն հարցին, թէ այդ ինչպէ՞ս են զարգացած երկրները բացում սահմաններն առանց ինչ-որ նախապայմաններ դնելու, Գագիկ Մելիքեանն ասաց, կամ իր ասելով՝ չի շեղեց, որ թուրքիան մեր դարաւոր թշնամին է: Ամէն դէպքում, երկու կուսակցութիւնների անդամներին միաւորում էր մի գաղափար, Գ.Իոնեսեանի խօսքերով «պէտք է հասարակութեանը տեղեկացնել առ այն, որ խօսքը գնում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՈՒՄ ԼՈՒՐՁ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ՍՊԱՍՒՈՒՄ

Հայաստանում գնալով աւելի են սաստկանում ՀՀ-ում կազդային լուրջ փոփոխութիւնների մասին տեղեկութիւնները: Խօսքը, առաջին հերթին, ՀՀ գլխաւոր դատախազի, ԱԱԾ տնօրէնի, ոստիկանութեան պետի եւ մի քանի նախարարների պաշտօնների մասին է:

Նախատեսուած է, որ ՀՀ գլխաւոր դատախազի պաշտօնում Ադուան Յովսէփեանին փոխարինելու է ներկայիս Մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանը, ԱԱԾ տնօրէն Գորիկ Յակոբեանը իր տեղը գիշերելու է ՄԻ նախագահ Գագիկ Յարութիւնեանի եղբորը՝ ԱԱԾ Երեւանի վարչութեան ներկայիս պետ Արզուման Յարութիւնեանին: Ոստիկանապետ Ալիկ Սարգս-

եանի տեղում նշանակուելու է կամ ոստիկանութեան Երեւանի վարչութեան ներկայիս պետ Ներսիկ Նազարեանը կամ ռազմական ոստիկանութեան ներկայիս պետ Վովա Գասպարեանը: Ըստ «Հայկական ժամանակ» օրաթերթի՝ սակայն, այդ պաշտօնում Ներսիկ Նազարեանի նշանակուելու շանսերը աւելի մեծ են:

Նախարարական պորտֆելներին նոր տէրեր ձեռք կը բերեն բնագոյն պատմութեան եւ առողջապահութեանը: Թերթը պնդում է, որ այս փոփոխութիւնների մասին որոշումն, ըստ էութեան, արդէն կայացուած է, եւ խնդիրը միայն ժամկետների հարցն է: Ըստ ամենայնի՝ փոփոխութիւնները տեղի կունենան այս ամսուայ ընթացքում:

ՀԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ՅՐԱՒԻՐԵԼ ԵՆ ՅԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի ներկայացուցիչ Վլադիմիր Կարապետեանին Փետրուարի 9-ին հրաւիրել են Հայաստանի յատուկ քննչական ծառայութիւն:

Կարապետեանը NEWS.am-ի հետ գրոյցում նշեց, որ իրեն հրաւիրել էին Յունուարի 10-ին Երեւանի թիւ 10 ընտրատարածքում կատարուած ապօրինութիւնների կապակցութեամբ յարուցուած քր. գործի շրջանակներում: Մասնաւորապէս, խօսքը վերաբերում է թիւ 10/19 ընտրատեղամասին, որտեղ ընդդիմութեան ակտիւստների եւ լրագրողների նկատմամբ բռնութիւններ եւ լցոնման դէպքեր էին արձանագրուել: Սահրապուրէնը բռնութիւն էին գործադրել նաեւ Վլադիմիր Կարապետեանի նկատմամբ, ով որպէս վստահուած անձ, հսկում էր

ընտրութիւնների ընթացքը: Վլադիմիր Կարապետեանը յայտնեց, որ ՀԲԾ-ում առերեսում է տեղի ունեցել ընտրատեղամասի նախագահ Գագիկ Բաղդասարեանի եւ յանձնաժողովի այլ անդամների հետ: «Ես նախաքննութեան գաղտնիութեան պատճառով չեմ կարող բացատրել ամէն ինչ, սակայն նշեմ, որ յանձնաժողովի նախագահն ու անդամները լիտի սուտ էին խօսում, փորձելով ինձ մեղաւոր հանել կատարածոմ», - նկատեց Կարապետեանը:

Յիշեցնենք, որ թիւ 10/19 տեղամասի ընտրութիւններն անվաւեր էին ճանաչուել: Իսկ ընտրատարածքում ընտրուել էր իշխանութեան թեկնածուն՝ «Ազգային միաբանութիւն» կուսակցութեան անդամ Արա Սիմոնեանը:

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՍԿՍՈՒԵԼ Է ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

«haynews.am»: Խատամբուլում ընթանում են Հրանդ Տինքի սպանության գործով տասներկուերորդ դատական լսումները, յաջանում է Zaman-ը: «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Հրանդ Տինքի սպանության գործով Խատամբուլի ծանր լսումներում ընթանում են դատական լսումներ, որին մասնակցում են 25 կասկածեալ: Դատական լսումներին ներկայ են ազատագրված տակ պահուող Օզին Սամասթը, էրհան Թիլնջեյը, Եսաին Հալալը, էրսին Եոլջուն եւ Ահմեդ Իսքենդեր, ինչպես նաև ստորագրության ազատության մէջ գտնուող այլ կասկածեալներ:



Հրանդ Տինքի սպանության մէջ մեղադրուող Օզին Սամասթ

Բացի կասկածեալներից դատարանում են նաև Տինքի ընտանիքի անդամները, քրդական «Խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան անդամներ, փաստաբաններ Բրիւսեյից, Փարիզից: Հետաքրքրական է, որ դատարանում են նաև Թուրքիայում սպանուած այլ լրագրողների հարազատներ, այդ թւում Աբդի Իփեքչիի, Օզգիւր Մուճշուլի եւ Սեգէն Օզի հարազատները:

Թուրքական Hürriyet պարբերականը յայտնում է, որ Թուրքական ոստիկանութիւնը մոռացել է դատական լսման բերել գաղտնի

վկաներից մէկին, որի արդիւնքում էլ այսօրուայ դատական լսման ժամանակ նրա վկայութիւնը չի լսուի: Յայտնի է դարձել նաև այն, որ գաղտնի վկան պատրաստուած էր վկայութիւն տալ յօգուտ այն փաստի, որ Հրանդ Տինքի սպանութեան մէջ մեղադրուող Օզին Սամասթը միայնակ չի գործել:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՄԵԾ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՈՒՆԵՆ

«Հայաստանի անկախացումից յետոյ, վերջին քսան տարիների ընթացքում հայ-իրանական յարաբերութիւնները բաւական բարձր մակարդակի վրայ են, թէ՛ քաղաքական, եւ թէ՛ տնտեսական առումներով», - ֆետրուարի 9-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց ԵՊՀ իրանագիտութեան ամբիոնի վարիչ Գառնիկ Ասատրեանը:

Հայաստան երկաթգծի կառուցման հեռանկարը, որը, նրա խօսքով, դժուար իրականանալի է ոչ թէ ֆինանսական, այլ գուտ կազմակերպչական առումով. «Սա մեծ տնտեսական, քաղաքական եւ ռազմավարական քայլ է, որը թոյլ կը տայ Հայաստանին ուղղակիորէն կապուել Պարսից ծոցի հետ», - ընդգծեց բանախօսը:

Համոզմունք յայտնելով, որ իրանի դերը Հայաստանի համար անվիճարկելի է, նա միեւնոյն ժամանակ նշեց, որ հայ-իրանական յարաբերութիւնները մինչեւ վերջ չօգտագործուած մեծ պոտենցիալ ունեն, յոյս յայտնելով, որ դրանք, ամենայն հաւանականութեամբ, կը զարգանան մօտակայ տարիներին:

Իրանագէտի կարծիքով, հակառակ երկու երկրների միջեւ առկայ տնտեսական եւ քաղաքական աշխոյժ կապերի, փոխյարաբերութիւններ գրեթէ չկան մշակոյթի եւ գիտութեան ոլորտներում. «Կրթութեան եւ մշակոյթի ոլորտում կապերը յանգում են անձնական յարաբերութիւնների: Համատեղ ծրագրեր այս ոլորտներում գրեթէ չկան», - ամփոփեց Գառնիկ Ասատրեանը:

Որպես էական ձեռքբերում, Գառնիկ Ասատրեանը նշեց իրան-

«ԱՂԲԵԶԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՎԵՐՍԿՍԻ, ԵԹԷ ՀԱՍՈՋՈՒԱԾ ԼԻՆԻ, ՈՐ ՅԱՂԹԵԼՈՒ Է»

«Աղբեջանի կողմից դարաբաղեան հարցում ամենամեծ զիջումն այն կը լինի, որ ճանաչուի Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքը», - ֆետրուարի 8-ին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց իշխող Հանրապետական կուսակցութեան անդամ Համլետ Յարութիւնեանը:

ազգին: Նրա խօսքով, բանակցութիւնների ժամանակ ոչ միայն աղբեջանական կողմն է տարածքային հարցեր բարձրացնում, այլև հայկականը:

Նրա խօսքով, բոլոր բանակցութիւնները ենթադրում են երկկողմանի փոխզիջումներ, եւ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը եւս բացառութիւն չէ. «Ես չեմ տեսել այնպիսի բանակցութիւններ, որոնք երկկողմանի փոխզիջումներ չնախատեսեն», - նշեց Յարութիւնեանը՝ յաւելելով, որ հայկական կողմի փոխզիջումները չեն կարող լինել անվայել հայ

«Ձեզ թւում է, որ հայկական կողմը բանակցութիւնների ժամանակ չի պահանջում հետ վերադարձնել Գետաշէնը, Շահումեանը, Արծուաշէնը եւ այլ շրջանները» - հարցրեց պատգամաւորը:

Նա նաև ընդգծեց, որ դարաբաղեան հակամարտութեան այս փուլում քիչ հաւանական է պատերազմական գործողութիւնների վերակառուցումը:

«Աղբեջանը պատերազմական գործողութիւնները կը վերսկսի միայն այն դէպքում, եթէ համոզուած լինի, որ յաղթելու է: Իսկ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԹՐՔԱՅԱՅ ԼՐԱԳՐՈՂ «ԶԱՄԱՆ» ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿԻՑ ԿԱՐՊԻՍ ՔԵՇԻՇՕՂԼՈՒԻ ՀԵՏ

- Պարոն Քեշիշօղլու, որպէս թուրքահայ համայնքի հետ առնչութիւն ունեցող անձնակազմի մէջ տեղեկութիւններ կարող եք ասել առաջիկայում սպասուող Պոլսոյ Հայոց աթոռակից Պատրիարքի ընտրութեան մասին:



«Զաման» թերթի լրագրող Կարպիս Քեշիշօղլու

- Շատ ցաւալի է, որ մեր կողմից շատ սիրելի Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանը հիւանդութեան պատճառով չի կարող լիարժէքօրէն կատարել իր պարտականութիւնները, սակայն, համաձայն մեր օրէնքների, ցկեանս կը մնայ իբրև պատրիարք: Շատ կարեւոր ընտրութիւն է սպասուած, որովհետեւ մէկը պէտք է ներկայացնի Պոլսոյ շատ կարեւոր համայնքը արտասահմանում, Անկարայում, կամ Հայաստանում: Այս պահին երեք թեկնածու կայ, որոնցից մէկը Մեսրոպ սրբազանի հետ աշխատած Արամ Արքեպիսկոպոս Աթէշեանն է, ինչպէս նաև Գերմանիայի թեմի առաջնորդն ու Վանաձորի թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուրջեանը: Յուսով եմ, որ Արամ արքեպիսկոպոսը պէտք է ընտրուի, որովհետեւ ինքը տեղացի է եւ համայնքի խնդիրներին աւելի ծանօթ:

- Կարելի՞ է եզրակացնել, որ այս ընտրութեանը խառնուելու են նաև Թուրքիայի պաշտօնական շրջանակները, եւ փորձելու են իրենց նախընտրած թեկնածուին աջակցել:

- Ընտրութիւնը պէտք է կատարուի համայնքի եւ եկեղեցիների թաղական խորհուրդների կողմից: Սակայն պարզ է, որ պաշտօնական Անկարան կը փորձի այս կամ այն չափով միջամտել գործընթացին:

- Պատրիարքի անձը կարելո՞ր նշանակութիւն ունի ողջ համայնքի համար

- Հարկաւ, որովհետեւ Պոլսոյ պատրիարքը ոչ միայն կարեւոր կրօնական անձ է, այլ նաև Պոլսոյ հայ համայնքի առաջնորդ եւ ներկայացուցիչ: Այս պահին մենք Ազգային վարչութիւն չունենք, եւ պետութեան հետ ծագած հարցերի դէպքում հենց Պատրիարքին են դիմում:

- Դուք՝ որպէս պոլսահայ համայնքի մօտ կանգնած մարդ, ի՞նչ եք կարծում՝ ինչպէ՞ս է ապրում տեղի համայնքը, երբ ամէն օր խօսուում է հայ-թուրքական յարաբերութիւնների մասին, երբ Թուրքիայում սպանուում է հայազգի լրագրող, եւ, առհասարակ, կայ լարուածութիւն:

- Պոլսահայ համայնքը նոսրանում է, այնտեղ հիմնականում ապրողները Թուրքիայի գաւառներ-

րից եկած ազգութեամբ հայերն են, որոնցից շատերն ուղղակի հայերէն չգիտեն: Այսօր մեր դպրոցներում կան 4000 հայ աշակերտներ, եւ թիւն էլ գնալով նուազում է: Գաղութը տակաւին ոտքի, դեռ կան 33 եկեղեցիներ եւ ազգային հիւանդանոց, սակայն դժուարութիւնները շատ մեծ են: Խառն ամուսնութիւններն են շատանում, նոր սերունդը հայերէն չի խօսում:

- Թուրքիայի իշխանութիւնները պարբերաբար խօսում են Թուրքիայում ապրող հայաստանցիների մասին: Արդե՞օք կայ իսկապէս մեծ թուով Հայաստանից արտագաղթեալներ, եւ կարողանու՞մ են նրանք պահպանել իրենց մշակոյթն ու լեզուն՝ ինտեգրուելով տեղի աւանդական հայ համայնքին:

- Թուրքիոյ մէջ ըստ պաշտօնական տուեալների մինչեւ 60000 հայաստանցի կայ: Նրանց մէկ մասը ամուսնանում են Թուրքերի հետ, եւ ստացել են քաղաքացիութիւն: Կան մարդիկ, ովքեր աշխատում են հետ են վերադառնում: Տեղաշարժերը շատ են: Միակ մեծ խնդիրն այն է, որ իրաւունք չունեն հայկական դպրոցներ այցելել, եթէ թրքապատակ չեն: Սա է, որ վտանգաւոր է մշակոյթի համար: Վերջերս, սակայն, Արամ սրբազանը հանդիպեց էրդողանի հետ, եւ հնարաւոր է, որ ոչ թրքապատակ հայերին հնարաւորութիւն տրուի այցելել հայկական դպրոցներ: Կայ նաև արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի տարբերութիւն, որը հաղորդակցութեան համար լրացուցիչ խոչընդոտ է:

Հարցազրոյցը վարեց Ռաբոկուայի հայկական «Արաբս» ռատիոյի տնօրէն Տիէկո Քարամանուկեան

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Շարունակուած էջ 3-էն

է ոչ թէ սահմանի բացել կամ չբացելու, այլ արձանագրութիւնների ու դրանց բովանդակութեան մասին. ժողովուրդը պէտք է հասկանայ, որ ի գորու է կասեցնել հայ-թուրքական գործընթացը»:

Ինչպէս իր գեկոյցը եզրափակեց ՍԴՀԿ-ի ներկայացուցիչ Գ.Մելիքեանը՝ «Մենք պէտք է բոլորս միասին փորձենք համախումբ քայլերով դուրս գալ այս դժուարին իրավիճակից: Որպէս այդպիսին այլ դեղատոմս, ազնուօրէն պէտք է ասեմ, դժուար է գտնել»:

ԱԶԳԱՅԻՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

ՍՈՒՐԷՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր 123 ամեայ Պատմութեան ընթացքում, հայրենակերտման գաղափարներով տոգորուած, զօրավիգ է եղել հայկական 3 հանրապետութիւնների կայացմանը տուեալ ժամանակաշրջանի հրամայականներին համաձայն:

Առաջին հանրապետութեան շրջանում, Օսմանեան կայսրութեան գազանաբարոյ եւ դաւադրական հուլիան շարունակութիւնը Քեմալական Թուրքիայի մէջ տեսնելով, ինչպէս նաեւ տարածաշրջանի տրամաբանական զարգացումները նկատի ունենալով շահեկան դուրս գալու համար կոչ էր անում օր առաջ ընդունելու խորհրդայնացումն իրականութիւնը:

Սակայն՝ «Հայոց» գահին բազմած Դաշնակցական ղեկավարները որդեգրեցին ամէն գնով իշխանութիւնն պահելու, քաղաքականութիւնը եւ «ժողովրդի» բաց ճակատով հաստ պատերին խփելու վնասակար սովորութիւնը:

Իսկ Խորհրդային Հայաստանին զօրավիգ լինելու հանգամանքը պայմանաւորուած էր այն իրողութեամբ, որ խորհրդայնացումը Հայաստանի վարչակարգը իր բռնատիրական եւ միահեծան հուլիանամբ հանդերձ Հայոց Մեծ Եղեռնից յետոյ ազգապահպանման եւ զարգացման կարեւորագոյն գործունէ էր իր մէջ պարունակում, որը եղեռնագարկ ժողովրդի համար հրաշքի նման բան էր, որի վկան է 70 ամեայ նրա պատմութիւնը:

Խորհրդային իշխանութիւնը կռեմլեան ինտերնացիոնալիզմի նրբոյ ազգային կուսակցութիւնների նկատմամբ մերժողական կեցուածք էր որդեգրել:

Հնչակեան կուսակցութիւնը նոյնպէս մերժուել եւ հալածուել էր: Սակայն երբեք անտագոնիզմի չվերածեց իր յարաբերութիւնները խորհրդային իշխանութեան հետ: 2-րդ համաշխարհայինից յետոյ բոլոր ջանքերով ձեռնամուխ եղաւ հայրենադարձութեան խրախուսմանը եւ ներգաղթի քարաւանների կազմակերպմանը աշխարհի տարբեր ծայրերից: Յիշենք աւելին, Ստալինեան ահաարսուռ շրջանից ԽՍՀՄ-ի հետեւեան քաղաքական ձնհալի սկզբնական շրջանը, որ Հնչակեան ղեկավարութիւնը ընկ. Կուսակցութիւնի գլխավորութեամբ Նախիջևեանի եւ Ղարաբաղի փոշնակած թղթապանակները ջանում էին կռեմլեան զգրոցների խորքից վերհանել եւ օրակարգի նիւթ դարձնել:

Յօդուածիս կոնսեպտը ոչ թէ պատմական իրադարձութիւնների շարադրումն է, այլ խոհափիլիսոփայական որոշակի դիտարկումը վերոյիշեալ հարցի շուրջը եւ այդ ֆոնի վրայ իրական պատկերի արտացոլումը:

Հնչակեան կուսակցութեան հայրենակենտրոն ռազմավարութեանը հակադրուեց դաշնակցութեան հակասովետական կենտրոնախոյս ռազմավարութիւնը: Չկորցնելով ոչ մի աւիթ հակակոմունիստական վարչակարգեր ունեցող երկրներում «Կոմունիստի» պիտակի ներքոյ հալածել եւ դուրս մղել հնչակեան ակտիւիստներին: Եւ ահա եկաւ խորհրդային կոմունիստական շրջանի մայրամուտը եւ երրորդ Հանրապետութեան

ծնունդը 1991 թ.ին:

Չնայած այն բանին որ այս հանրապետութիւնը ժառանգել էր տնտեսական եւ մշակութային զգալի կարողութիւն: Բայց միապետական, համայնավարական համակարգի անցման բարդոյթները, դարաբաղեան հարցի շուրջ սանձազերծած պատերազմը Ատրպէյճանի կողմից, երկրի շրջափակումը, եւ ամենաաղէտալին, աւերիչ երկրաշարժը՝ եւ նրա հետեւանքների յաղթահարումը եղան նորանկախ հանրապետութեան հրամայական օրախնդիրները:

Հնչակեան կուսակցութիւնը զօրավիգ եղաւ առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին, հսկայական էին ծառայած ինդիւստրիալ: Սակայն Հայ մարդու հաւաքական կերպարի մէջ ապրող այն գէնը, որ կոչուած էր օրհասական պահին ազգը միասնական եւ միակամ դարձնելու, պէտք էր ակտիւացնել: Մատենադարանի մարդկային մտքի դարաւոր իմաստութիւնը իրենց մէջ խտացրած մատենաների ծալքերի շողքից իմաստնացած Լեւոնը, պէտք է ղեկավարեր Հայոց Համազգային շարժումը եւ գիտակցելով Հայ մարդու մէջ եղած այդ գէնի ակտիւացման անհրաժեշտութիւնը առաջնորդեր համազգային ներուժով այդ բոլոր մարտահրաւէրներին դիմագրաւելու գործը:

Դարաւոր պատմութեան մէջ առաջին անգամ, ազատագրուեցին հայկական հողեր, յաղթեցին ճակատամարտում, անհրաժեշտ էր յաղթել նաեւ ինչպէս տարածաշրջանի այնպէս էլ միջազգային ասպարեզում նետուած մարտահրաւէրներին, որտեղ պէտք էր քաղաքական, դիւանագիտական մտքի գերագոյն լարուածութիւն, հետեւել եւ իրականացնել քաղաքական բարդ կոմբինացիոն քայլեր:

Թուում էր յաղթանակած Ղարաբաղի նախագահին որպէս Հայաստանի վարչապետ կարգելը յաջողուած քայլ էր: Երկու հանրապետութիւնների ժողովրդի նոյնութիւնը հաստատելու եւ նրանց միաւորման աղերսանքը լսելի դարձնելու առումով: Սակայն ժամանակը ցոյց տուեց, որ նորանկախ բայց երազկոտ ժողովրդի ղեկավարութեանը այդքան «խելացի» քայլեր չէր կարելի:

Միայն Ղարաբաղեան «Բերդի պաշտպանութիւնը եւ ամբարայնումը կարող էր այս «հանձարեղ» քայլի օբյեկտը հանդիսացող Ռ. Քոչարեանի առաքելութիւնը լինել եւ ոչ թէ Հայաստանի նախագահական բարձունքից դարաբաղեան հարցի կարգաւորումը:

Սխալը թոյլ էր տրուել: Այդ ժամանակ իշխանական կուլիսնեթում վճռական ձայն ունէր ազգային բանակի ձեւաւորման գործում իր հսկայական աւանդը ներդրած պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանը, որ յետագայում պէտք է դառնար վարչապետ ու վերջում մի խումբ ստահակների ձեռքով կազմակերպուած աներեւակայցի յանցագործութեան գոհր դառնար: Վազգէն Սարգսեանի համար սփիւռքահայ մեծահարուստները կողմից «հայկական ներդրումներ» հոսքը եւ այդ միջոցներով երկրի տնտեսութեան եւ պաշտպանութեան զարգացումը, եղաւ մի գայթակղիչ խաղձ, որ

միանար այն ձեւաւորող հակա-Լեւոնեան ճամբարին, որոնք նրա վարած քաղաքականութիւնը համարեցին նահանջողական եւ դաւադրական:

Ուստի աւելորդ գոհերից խուսափելու համար հասունացաւ այն պահը, որ Լ. Տ. Պետրոսեանն իր թիմով պէտք է հրաժարական տար: Ասպարէզը թողնելով «Ծովից Ծով» երգող Երեւանում նստած Ղարաբաղի հարցը լուծող ուժերին:

10 տարի անցաւ, բայց ոչ միայն Ղարաբաղեան հարց չլուծուեց, այլ.

- Ղարաբաղը դադարեց կարգաւորման գործընթացի սուբյեկտը լինելուց եւ դուրս մղուեց բանակցութիւնների սեղանից:

- Հայաստանը դուրս մղուեց տարածաշրջանի խոշորագոյն եւ շահաւետ նախագծերից:

- Արտաքին եւ միջազգային յարաբերութիւնների մէջ օր-օրի թուլացան Հայաստանի դիրքերը:

Հայաստանը Ծաւալապաշտի, ինտերվենտի եւ օկուպանտի «պատուաւոր» տիտղոս ստացաւ: Արդիւնքում «Ազգային ինքնորոշում» բառակապակցութիւնը անհետացաւ Եւրոպացի կարգաւորողների շուրթերից, տեղը գիջելով եւ շեշտակիօրէն արտացոլելով «տարածքային ամբողջականութեանը»: 1998 թ.ի իշխանափոխութիւնից յետոյ կառավարման բուրգի կոռումպացումը եւ Ղարաբաղի ու արտաքին քաղաքականութեան մէջ սխալ շեշտադրումների որդեգրումը ստիպեցին Հնչակեան կուսակցութեանը Քոչարեանական ռեժիմի հանդէպ արմատական ընդդիմադիր կեցուածք որդեգրել (Համահնչակեան 17-րդ համագումար Կիպրոս 2001.թ):

Դաշնակիցը եղաւ քաղաքական դաշտի առողջ ու կառուցողական ընդդիմադիր ուժերի, ինչպիսին էր «Արդարութեան Դաշինքը», պէտք է խոստովանենք որ այն չարձանագրեց այն յաջողութիւնները որ ակնկալուում էր ժողովրդի կողմից: Վերջապէս ողջունեց եւ ոգեւորեց քաղաքական թոհուբոհների մէջ թրծուած, 10 տարուայ լուծութիւններից յետոյ քաղաքական բեմ ելնող առաջին նախագահ Լ. Տ. Պետրոսեանի վերադարձը:

Հնչակեան կուսակցութեան Հայաստանի կառուցը յանձինս ատենապետ Լիւդմիլա Սարգսեանի եւ Երիտասարդական թեւի Նարեկ Գալստեանի ղեկավարութեամբ, առանցքային դերակատարութիւն ունեցան ժողովրդական շարժումը ծաւալելու եւ «Հայկական Ազգային Կոնգրես» ընդդիմադիր կառուցը ձեւաւորելու եւ ամբարայնելու հարցում: Հնչակեան կուսակցութեան սփիւռքեան կառուցները համահունչ եւ արդիւնաւէտ ձեւով արձագանքեցին հայրենիքում ծաւալուած գործընթացներին:

Ազգային կոնգրեսի ձեւաւորումը Տէր Պետրոսեանի ղեկավարութեամբ ժամանակի պահանջն էր եւ ժողովրդական շարժման տրամաբանական շարունակութիւնը, շարժման ալիքը եւ էներգիան նպատակասլաց ուղղութեամբ մղելու եւ օրուայ հրամայականին համահունչ դարձնելու համար:

Քանզի երկիրը հաց ու ջրի պէս կարիք ունէր ժողովրդավարութեան, արդարութեան, օրէնքի, իշխանութեան եւ վստահու-

թեան վերականգնմանը: Ազգային կոնգրեսի կազմում ՄԴՀԿ ներկայութիւնը եւ գործունեութիւնը համահնչակեան ընտանիքի որդեգրած ընդհանուր քաղաքականութեան ու ռազմավարութեամբ էր պայմանաւորուած:

Ներկուսակցական անառողջ մթնոլորտ

Համահնչակեան ղեկավարութիւնը իր վերջին համագումարներում, անկախ քաղաքական անպատ պայմաններից Հայրենիք վերադառնալու մարտավարութիւնն որդեգրեց: Որոշ ակտիւ եւ ճանաչուած դէմքերից եկան համալրելու Մայր կուսակցութեան շարքերը:

Ազգային ժողովի պատգամաւոր Վարդան Խաչատրեանի մուտքը ակամայից որոշակի իրարանցում առաջացրեց կուսակցութեան հայաստանեան կառույցի ներսում: Հայաստանի Ատենապետ Լիւդմիլա Սարգսեանը, Վարդանի մուտքը դիտարկեց որպէս իրեն հետին պլան մղելու կամ հեռացնելու փորձ: Չնայած բոլոր բացատրութիւններին, թէ Վարդանի մուտքը չի ստուերելու նրա գործունէութիւնը եւ կապ չունի նշուած պաշտօնի հետ:

Լիւդմիլայի վարքագիծը շեշտակիօրէն փոխուեց, կարծես եւ աթոռը պահելու համար սկսեց ջղաճիգ ոչ պատշաճ դրսեւորումներ, որին նպաստում էր վերջին համագումարում կուսակցութեան կենտրոնի անդամ դարձած Գ. Եղիազարեանի յորդորումները, եւ սեղական մամլոյ ասուլիսներում ցեխարձակումները: Թէեւ Համահնչակեան 19րդ Համագումարի որոշումամբ հաստատուել էր ՄԴՀԿ ի քաղաքական պայքարի գիծը ընդդիմադիր դաշտում, Ազգային Կոնգրեսի կազմում, Լ. Սարգսեանը մերթ ընդ մերթ ՄԴՀԿ-ը ՀԱԿ-ից դուրս գալու գուշակութիւններ էր անում, կուսակցութեան ներկայութիւնը այնտեղ պայմանաւորելով իր անձի հետ:

Շիկանում էր մթնոլորտը: Շրջանային վարիչ մարմնի կազմից եւ երիտասարդ ակտիւիստներից ձեւաւորուեց կազմ կոմիտէ, հրաւիրուեց արտահերթ համագումար, որ ապահովում էր օրէնքի եւ պատշաճութեան նորմերը:

Վերը նշուած համագումարը կայացրեց համապատասխան որոշում, որ արժանացաւ ՄԴՀԿ կենտրոնի հաւանութեան եւ ընդունուեց ու հրապարակուեց համապատասխան յայտարարութիւն: Վերոյիշեալ որոշմամբ կուսակցութիւնից հեռացուեցին ինչպէս Լ. Սարգսեանը, այնպէս էլ Գուրգէն Եղիազարեանը: Այլ հարց է անարդար կամ արդար որոշում էր, այլ հարց է կնիքը ում մօտ կամ որտեղ է գտնուում: Քանի որ հաւաքականութեան ոգին էր գերիշխողը այդ որոշման կայացմանը, սպասուում էր որ Կոնգրեսը նոյնպէս կ'ընդունի այն: Սակայն կոնգրեսի ղեկավարութիւնը վարժուած լինելով կուսակցութիւնը լոկ անձերի մէջ տեսնելու վարժանքին, մոռանալով որ այստեղ Հնչակեան կուսակցութեան հաւաքական իմիջն է կանգնած դեմառդէմ: Աւելորդ սուրբ տրուեց անձին, ի դէմս Լիւդմիլա Սարգսեանի: Այստեղ Խնդիրը կայանում է հայեցակարգային մի շարք հարցադրումներ

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ

ՎԱՅԹՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՎԱՐԱԽՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՎԵՏԵՒԱՆՔՆԵՐ

ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ ՄԴԶԿ «Սարգիս Տիրունի» ռեսուրսային կենտրոնի տնօրեն

Ամենեւին հեռու է պատմական այն անցեալը, եւ համոզուած եմ ներկաներից շատերն են չիշում ազգային ազատագրական շարժման վերելքն ու հայ ժողովրդի ապրած դառը տարիները 20-րդ դարի վերջին: Իր անկումն ապրող ժամանակի ամենահզորներից մէկը՝ Խորհրդային Միութիւնը, կնքեց իր մահկանացուն՝ իր հպատակ ժողովուրդներին թողնելով չլուծուած բազմաթիւ ճակատագրական խնդիրներ, ազգութիւնների աղաւաղուած ճակատագրեր, ինչպէս նաեւ չփարանց ստեղծել տարածաշրջանային նոր հակամարտութիւններ ու խթանել որոշների թարմացումը:

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանը Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ մեծ հաշուով փակ էր: Ճիշտ է, չնայած սահմանի պաշտօնական փակումը տեղի ունեցաւ 1992-ին, սակայն հենց սկզբից էլ հաղորդակցութիւնը այդ սահմանով արցախեան պատերազմի պայմաններում հասցուած էր գրոյակահանի: Սահմանի փակումից յետոյ տարբեր միջազգային կառույցներ եւ մեծ պետութիւններ յորդորել են Թուրքիային անյապաղ բացել սահմանն ու վերացնել Հայաստանի շրջափակումը: Թուրքիան, սակայն, կողմնակալ դիրք գրաւելով ԼՂՀ հակամարտութեան հարցում եւ չփախնայով կանգնել պատմութեան ու առաջադէմ հասարակութեան դատաստանի առաջ՝ դարասկզբին իր գործած մեծագոյն ոճիրի՝ Հայոց Յեղասպանութեան համար, ոչ միայն հրաժարուած էր բացել սահմանն առանց նախապայմանների, այլ նաեւ հնարաւոր բոլոր միջոցներով ու դրսեւորումներով շարունակում էր իրականացնել անխաչ հակահայ քաղաքականութիւն: Տալով զուտ քաղաքական գնահատական, կարելի է փաստել, որ Թուրքիան Հայաստանի հետ բազմաթիւ տարիներ է, ինչ գտնւում է չյայտարարուած առանց զէնքի պատերազմի մէջ: Փաստօրէն, այստեղ առկայ է հայ-թրքական հակամարտութիւն՝ եկած դարերի խորքից, որն այսօր արտայայտուած է շրջափակումով, իր փոքր եղբայր Ատրպէյճանին բազմակողմանի օգնութեան տրամադրումով, միջազգային բոլոր կառույցներում հակահայ եւ հակահայաստանեան գործունէութեան ծաւալումով: Այսինքն սեղանին դրուած է ոչ թէ հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորումը, այլ հայ-թրքական հակամարտութեան կարգաւորումը:

Տասնեակ տարիների ընթացքում Հայաստանը բազմիցս յայտարարել է, որ պատրաստ է Թուրքիա-

The opening word of the Creed is a verb, havadamk, meaning "We believe", in the plural and not in the singular. It is a declaration of OUR faith as a United Church of Christ and is followed immediately by the items of the Creed one by one, which we believe as our Christian faith. The following are those items of doctrine derived from the Holy Bible.

"We believe in One God"

We believe in One God who is the Father Almighty, Creator of heaven and earth and of all beings. The emphasis is first on ONE God in whom we believe, and not more than one; and secondly, in God Almighty whose Creation speaks for Himself.

"And in One Lord Jesus Christ"

We believe that the Lord Jesus Christ is also ONE, being born of God the Father as His only begotten SON. We believe that the Son is equally God with the Father who, bearing the same nature, is "God from God, and Light from Light" who, coming down from heaven for our salvation, was born of Mary as a man through the Holy Spirit. He lived a perfectly human life, was tortured and crucified, was dead on the Cross, was buried, and was raised from his grave on the third day. He then was lifted up and sat on the right side of the Father in heaven.

"And in the Holy Spirit"

We believe in the Holy Spirit who is "unmade", meaning "not created", unlike the heaven and the earth. He is the Spirit of God at the Creation who gave power and wisdom to the Prophets and the Apostles to speak on behalf of God. The Holy Spirit came down in the river Jordan when Jesus was being baptized by John the Baptist.

"One Catholic, Apostolic, and Holy Church"

We believe in One Church belonging to all. There can be no church other than the one founded by Christ through the activation of the Holy Spirit. That One Church is also Catholic, meaning "universal", the Church that belongs to all, and not only to selected races or nations. The Church is Holy, meaning spotless and distinguished from any and all organizations known to us. The Church is also Apostolic, meaning that Christ and his Word was preached directly by the Apostles of Christ themselves, and not by the preaching of their successors. Those four qualifications are called the attributes of Christ's Church.

"Baptism, Repentance, Second Coming"

We believe in Baptism by water and by the Holy Spirit as a second birth like Jesus Christ who voluntarily went to river Jordan to be baptized by John. While being baptized, the Holy Spirit came down upon Jesus, and the Father spoke from behind the clouds confirming Jesus to be His Beloved Son. The Church administers Baptism as the foremost act of God, considering it the "door" to enter into full communion with Christ and Christianity. Repentance is the only way to clean oneself from his/her sinful actions, and return to Church as a worthy follower of Christ. We believe also in the Second Coming of Christ the Lord as promised by him and as instructed by him "to be ready always", not knowing its time nor the manner of his appearance.

"Resurrection of the Dead and the Last Judgment"

Believing in Christ's Resurrection, we believe also in the resurrection of all who have fallen asleep in the name of Jesus Christ as promised by him. We believe because of the words of Christ saying, "I came to give you life, and life in abundance". We believe in the Last Judgment on the last day, based on the quality of the lives lived by Christians. Those who lived after Christ and his Gospel, they will be judged accordingly. We also believe in the Kingdom of Heaven and in Life Everlasting.

The Nicene Creed is Final

The Nicene Creed has been the final Confession of Faith since its compilation in 325 AD. It was confirmed by the next two Ecumenical Councils as the final statement of faith of the Universal Church for all times and for all churches. The Creed resisted against all controversies, divisions, and misinterpretations, staying firm on its original foundations as the Creed of Faith of all Eastern and Western Churches since the first Three Ecumenical Councils.

Continued on page 4

New Publication

Giants of the Earth by Mitch Kehetian


Mitch Kehetian's *Giants of the Earth* is a memoir about the search for his father's sister and heritage in historical Turkish-held Armenia. The veteran journalist also shares snapshots on Armenia's history, from its very existence 2,000 years ago to the devastation it suffered during the genocide of 1915-23.

The author's dramatic memoir comes to life in Moscow when an Armenian woman from his father's village in Turkish-held Armenia tells him that her brothers saw "Parancim" in 1947 before they repatriated to then Soviet Armenia. With the help of Congressman Lucien Nedzi and Secretary of State William Rogers, Kehetian was able to fulfill his mission to the barren, depopulated homeland of his ancestors in Turkish-held Armenia, a mission which ended with a prayer at his aunt's mountaintop gravesite overlooking the Euphrates River.

Kehetian wrote the book "newspaper style," not in scholarly prose. "Giants of the Earth" is not targeted at first generation Armenian-Americans who know the homeland's history well, or the second generation who earned their heritage through word of mouth. The author's audience, he hopes, will be the third generation.

"I want that third generation to know what really happened," he said, "and I want them to understand why the Armenians still seek justice."

"Actually, the 13 chapters were written in the 1970s and early '80s. And then I just let it sit. I figured I'd present it some day to my grandchild-



dren as a memoir," Kehetian said.

Mitch Kehetian is a native of Detroit, where he lunched his newspaper career in 1953 at the Detroit Times. In 1961 he was a reporter for the Columbus Citizen Journal and until his retirement in 2005 was an editor of The Macomb Daily. Kehetian was president of the Detroit Press Club and Society of Professional Journalists. He served for 13 years as a governing board trustee at Central Michigan University. In 2006 Wayne State University's Journalism Department honored him with its coveted "Lifetime Achievement Award" for "championing the public's right to know" for more than 50 years.

Giants of the Earth is published by www.PublishAmerica.com

Lincy Foundation Grants \$110,000 to Keyan School

FRESNO/CLOVIS -- The Board of Directors of the Charlie Keyan Armenian Community School proudly announces the award of an \$110,000 grant from the Lincy Foundation.

"I shouted with joy when I opened the envelope from the foundation. We thank God for the Lincy Foundation, its benefactors, executives, and all who placed such confidence in us. Bless each," said CKACS Principal Sophie Mekhitarian.

Funds from the grant will be applied to the school's various expenses and provide scholarships to needy students. A portion of the donation also will be used to purchase computer-based or interactive whiteboards for the elementary school classes. These teaching devices essentially represent the 21st century ver-

sion of the chalkboard or overhead projector. They bring to life words and images and have been found to stimulate thought and teacher-student interaction at the primary school level.

"Studies show overall improvements in participation by students and considerable grade improvements as they grow in understanding of the material because it's so interactive. This generation is so savvy with electronics that it's easy for them to follow material presented with direct involvement," commented Mekhitarian.

Last year, the school received a special grant for the development of a playground. Thanks to Lincy Foundation funds, CKACS student now enjoy a large grassy area for field sports, two full basketball courts, and numerous other recreational opportunities.

UCLA INTERNATIONAL CONFERENCE SERIES ON HISTORIC ARMENIAN CITIES AND PROVINCES

March 20, 2010, Saturday, 9:30-5:30

The Armenian Communities of Asia Minor
(Adabazar, Bardizag, Ismid, Bursa, Armash, Kutahia,
and others near the Sea of Marmara)

1200 Rolfe Hall, UCLA No admission fee. Parking # 5 (with fee),
entrance: Sunset Blvd and Royce Drive.

UCLA map, www.map.ucla.edu

Sponsored by the AEF Chair in Modern Armenian History,
with support from the Organization of Istanbul Armenians.

For information, e-mail Prof. Richard Hovannisian
at Hovannis@history.ucla.edu

Dilijan Music Society Arno Babadjanyan Program A Very Special Concert

By Charles Fierro

In art as in life, things rarely go perfectly, but when they do, we feel lucky indeed. Just such a fortunate occasion took place in Los Angeles at a concert presented by the Dilijan Music Society on January 24. A capacity audience gathered at the Herbert Zipper Hall for a program of chamber music by Arno Babadjanyan (1921-1983). The late composer enjoyed the status of a national hero in his native Armenia and in Soviet Russia, where he received numerous honors, awards and commissions. His compositions are well known in communities of the Armenian diaspora; outside these communities, however, he has yet to receive the recognition he deserves.

The quality of at least two of the selections on the program demonstrated conclusively that his is a major talent. The late Third String Quartet (1979) employs avant-garde idioms with telling effect. Within a tight structure, the music commands attention from beginning to end of its single-movement design.

Similarly, the virtuosic early Piano Trio (1952), displays mastery of all its musical elements in a striking way and, in the opinion of some musicologists, raised the art of Armenian chamber music to a new level.

It is important to remember that Babadjanyan's entire career took place during the Soviet era, when state sponsorship and state control imposed a Socialist Realist doctrine on all the arts. Creative minds responded to these

strictures in varying ways. We remember the bitter ironies and pseudo-conformities of Shostakovich and Prokofieff. Babadjanyan found his own way, sometimes sincerely producing music that would appeal to a mass public, at other times, as in the Third String quartet, asserting astonishing modernist independence.

Four Songs for soprano and piano, in a style somewhere between Rachmaninoff and Jerome Kern, illustrated the composer's successful attempt to achieve the warmth and immediacy of popular music. The Poem (1966) for solo piano showed the composer beginning to fuse serial techniques with traditional ethnic idioms. During an interview in lieu of intermission, the distinguished composer, Tigran Mansurian, shared reminiscences of his friendship with his senior colleague.

The performers, all well known to Southern California audiences, were superb. Violinists Roger Wilkie and Moses Pogossian, violist Kate Vincent, cellist Ronald Leonard and soprano Maria Abajan, projected their respective roles with consummate skill and sensitivity. The big find of the day was guest pianist Artur Avanesov. His formidable technical prowess, dramatic insight and engaging personality were important factors in making this a memorable event. I hope he will return often.

Charles Fierro is a concert pianist and Professor Emeritus of Music at California State University Northridge.

Pianist Vahan Mardirossian and cellist Alexander Chaushian in Concert at Fresno State

FRESNO -- Award winning pianist Vahan Mardirossian and cellist Alexander Chaushian will perform in a concert sponsored by the Armenian Studies Program and the Philip Lorenz Memorial Keyboard Concert Series at Fresno State. The concert will be held at 8:00 PM on Friday, February 26 in the Concert Hall on the Fresno State campus.

They will be playing duo works by Debussy, Shostakovich, Franck, and Armenian composers

Pianist Vahan Mardirossian returns to Fresno after his memorable recital during the 2005-2006 season. Since his debut as a pianist, Mardirossian has regularly been invited to appear with orchestras including the Yerevan Chamber Orchestra, the Armenian Philharmonic, and the Paris International Orchestra.

Mardirossian was born in Yerevan, Armenia and in 1993 he entered the Paris Conservatoire (CNSM) in Jacques Rouvier's piano class. Vahan Mardirossian has given recitals in many countries and his performances were broadcast in France and elsewhere. He recently made a recording of works by Schubert, Händel and Brahms for the Intrada label. He also made live recordings devoted to piano works by Eric Tanguy, and J.S. Bach Transcriptions recorded for TransArt Live label.

London-based Alexander

Chaushian has appeared in many of the world's finest venues including New York's Carnegie Hall and Boston's Symphony Hall. Now regarded as one of the finest cellists of the younger generation, Alexander Chaushian has performed extensively throughout the world. As a soloist with orchestra his appearances include the Vienna Chamber Orchestra at Vienna's Konzerthaus and at the Bruchnerhaus in Linz, as well as with the London Mozart Players and the Philharmonia Orchestra in London, and the Royal National Orchestra of Belgium.

Chaushian won First Prize in the Premio Mozart Competition in Verona, Italy and First Prize in the International Music Competition in Holland. Chaushian was awarded 3rd prize in the 12th International Tchaikovsky Competition in Moscow.

General tickets for the concert are available for \$18 per person, for seniors tickets are \$12, and tickets for students are \$5.00 per person. Ticket reservations for the concert may be made by calling 278-2337. Tickets are also available on-line at keyboardconcerts.com or at the Fresno State Music Department Box Office, between 11:00AM-1:00PM on weekdays.

For more information on the Concert please contact the Armenian Studies Program at 278-2669.

AMAA Orphan and Child Care Luncheon and Fashion Show Saturday, March 13



AMAA Orphan Care Committee

LOS ANGELES -- The AMAA Orphan and Child Care Luncheon and Fashion Show is almost here! It is going to be absolutely spectacular, with fashions from Nordstrom, modeled by our gorgeous young models, an amazing silent auction featuring priceless items – from handpainted works of art to magnificent jewelry to tickets to incredible events, all organized by our silent auction chair, Argine Jean Kelegian - and all at a legendary venue – the Beverly Hills Hotel! This is truly a luncheon not to be missed.

This year's luncheon theme "Children Helping Children" is so very appropriate with all that is happening in the world around us today. From our difficult economic conditions to the heart wrenching devastation in Haiti, we here in Southern California have so much to be thankful for... and our children here are thankful and want to extend a helping hand to their brethren in Armenia. Let us remember that children of Armenia are lacking the basic necessities of life and are afraid to be forgotten in the turmoil of our world.

Marilyn Bezdikian excitedly stated that "so many children have signed up so far to be models this year and we have some amazing fashions. With Nordstrom coordinating, I am looking forward to an absolutely fabulous show". She explained that the models are thrilled to be helping the orphans in their own way. Caroline Tufenkian, fashion show co-chair with Marilyn Bezdikian, and Ani Zakari both stated that they are still getting so many telephone calls to be able to model in the fashion show! "It is so much fun working with all these kids for such a good cause", exclaimed Ani. Arsine Phillips and Lori Muncherian, the West Coast co-chairs, echoed Grace Kurkjian's sentiments when she emotionally stated that "the children of Armenia are always in our prayers and when I see children here, in southern

California, reach out and touch a life in Armenia, it is such a fulfilling and rewarding emotion, both for us here and in Armenia..".

Our children here are asking you to sponsor their brothers and sisters in Armenia. For a donation of \$250.00, a sponsor can change the life of a child forever. What amounts to less than 70 cents a day is all it takes to provide a child with basic food staples such as sugar, rice, flour and macaroni. They will receive hygiene supplies and educational supplies. The children will also become a part of the AMAA's spiritual and wellness programs such as Sunday School, Vacation Bible School, Summer Camps and Medical and Dental Care.

Maro Yacoubian informs us that child sponsorship donations are already being received, explaining that "although we are all living in harsh economic times, and are at times frightened by what may be around the corner, realizing that the children in Armenia are also frightened is encouraging donations to come in so that we can reassure them we are here for them and we will not forget them". Joyce Stein, the national chair, also added that "witnessing the severity of the devastation in Haiti – the number of orphaned and injured children – has also touched everyone so much that individuals are counting their blessings and sponsoring children in Armenia in whatever way they possibly can."

On March 13, 2010, the Beverly Hills Hotel is the place to be – amongst family and friends – to be part of an event that can change the lives of so many children in a land that is far away by distance, but so very close in our hearts... Let us be thankful for what God has blessed each one of us with and share our love.

For reservations or further information, please contact Arsine Phillips at (213) 509-4337.

The Nicene Creed Of the Christian Church

Continued from page 3

cils of Nicea (325), Constantinople (381), and Ephesus (431). The Nicene Creed refuted all wrong doctrines, past and present, especially the sectarian teachings of the modern age. The Creed is faithfully recited as is during the administration of all Sacraments of the church.

The Creed of St. Gregory of Datev
In the opening pages of the Breviary of the Armenian Church there is

another version of the Creed compiled by St. Gregory of Datev in the 14th century. It is read by the celebrant priest the first thing in the morning prior to the Mid-night Service. It is essentially the same as the Nicene Creed, only with additional elaborations and explanations. Whereas the Creed of St. Gregory of Datev is compiled exclusively for the Armenian Church, the Nicene Creed, the official text of the Creed, belongs to the Christian Church at large.

ԱԲԱՐԱՅՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ



ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ազգերու պատմութեան մէջ դէպքեր եւ թուականներ կան որոնք ճակատագրական դեր կը խաղան եւ անկիւնադարձ մը կը հանդիսանան անոր յետագայ ընթացքին:

451 թուականի Աւարայրի հերոսամարտը մեր ազգային պատմութեան այդ դրուագներէն մէկն է, որ իր հայրենասիրութեան խորհուրդով, «իմացեալ մահ»ու անգերազանցելի օրինակով եւ առաքինութիւններու որպէս ներշնչարան մեր ազգի պատմութեան մէջ յաւերժացած է իր յաղթական խորհուրդով:

Շատ գրուած է եւ շատ խօսուած «Վարդանանց»ի մասին, բայց միայն զգացական պատումներով, կրօնական խորքով եւ եկեղեցական իմաստներով:

Պատմութեան մէջ պատերազմները անպակաս եղած են: Ազգեր ազգերու դէմ արշաւանքներ մղած յափշտակութիւն, աւեր, հարստահարութիւն, ստրկութիւն եւ կամ դասակարգային տիրապետութիւն հաստատած են:

«Վարդանանց» դիւզազնամարտը պատերազմներու այս շարքին չի պատկանիր սակայն: Այս պարագային թշնամիին բանակը մեր երկիրը քաղաքական դատի մը համար չէր խուժեր եւ ալ երկիրը գրաւելու կամ թալանելու:

Հայութեան նիւթեղէն հարստութիւնը չէ որ վտանգուած էր, այլ իրմէ կը պահանջուէր գոհողութիւններու ամենէն ծանրը եւ ամենէն թանկագինը, իր ինքնութիւնը, մշակոյթը եւ ապագան...:

Եթէ Պարսկաստանը յաջողէր իր կրօնքը՝ կրակապաշտութիւնը պարտադրել եւ կարենար հայութիւնը կլանել, ինչպիսի՞ ճակատագիր պիտի ունենար մեր ազգը:

Տղմուտի աւագոտ ակերուն հագարէ աւելի հայ գիւնուորներ իրենց «իմացեալ մահով» պիտի շահէին իմացական դատ մը. հայ մշակոյթի վերապրումի դատը, որ առանցքը պիտի հանդիսանար մեր ազգային գոյատեւման: Ահա ապիկ վարդաններու եւ Ղեւոնդ երէցներու մեծութիւնը եւ անձուրացութիւնը, անոնց ճշմարիտ եւ անկորնչելի քրիստոնէական եւ հայրենասիրական ոգին եւ գոհողութիւնը:

Աւարայրի «կամաւոր պատարագ»ով հայութիւնը կերտեց իր գոյատեւման իրաւունքը՝ սերունդէ սերունդ փոխանցելով անոր խորհուրդը եւ դարեր շարունակ ոգեւորելով հայ սերունդները, հանդիսանալով նաեւ բարոյական ըմբռնումներու հզոր կերտիչը:

Հայ հին սերունդը առաւել կամ նուազ գիտակ է վարդաններու կա-

տարած դերին: Դժբախտաբար այս նիւթապաշտ դարու մէջ հասակ նետող նոր սերունդն է որ գրեթէ անհաղորդ կը մնայ անոնց վեհ իտեպիւն ու գաղափարին: Հայ ժողովուրդը ցաւօք այլ տեսակի «Աւարայր»ներու առջեւ կը գտնուի այսօր: Սակայն ուր են վարդանները եւ Ղեւոնդները եւ ո՞ւր են այդ հին հաւատքը եւ սէրը դէպ հայրենիք: Ո՞ւր են խիզախ կեցուածքները եւ ո՞վ պիտի պաշտպանէ մեր ժողովուրդի իրաւունքները: Բոլոր խառնաշփոթութեան մէջ ո՞ւր է վատահուժիւն եւ ո՞ւր են քաջ գիւնուորներ եւ նախարարներ: Սուտերու, կեղծիքներու եւ աղտոտ քաղաքականութեան շեմին ի՞նչ է մեր ազգի ճակատագիրը:

Ի վերջոյ եկէք այսօր խոնարհինք Աւարայրի անկորնչելի խորհուրդին առաջ:

Փառք վարդանին, այդ օրուայ նախարարներուն եւ կրօնաւորներուն որոնք իրենց արեան գնով պահպանեցին մեր ինքնութիւնը, մեր երկիրը եւ մշակոյթը:

Հայու իսկական նախանձախնդիր հոգիով, կամքով եւ հաւատքով թող այսօրուայ հզօր խորհուրդը զգաստութեան հրաւէր հանդիսանայ մեր ազգին, մեծէն մինչեւ փոքրը, հայրենիքէն մինչեւ սփիւռք...: Պահպանենք մեր մշակոյթը, մեր լեզուն, մեր կոթողները եւ մեր պապերու ժառանգը:

«ՎԱԼԵՆՂԱՅՆ» VALENTINE

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Իւրաքանչիւր ֆետրուար ամսուան տասնըչորսին, ամբողջ Ամերիկայի Միացեալ Նահանգներում եւ մի քանի այլ երկրներում ծաղիկներ ու նուէրներ են փոխանակուում սիրելի անձանց միջեւ՝ եւ այդ բոլորը Սուրբ Վալենդայնի անուով: Սակայն ով է այդ խորհրդաւոր Սուրբը եւ ինչու են տօնախմբում այդ տօնը: Վալենդայնի օրուան պատմութիւնը քողարկուած է խորհրդաւոր առեղծուածներով: Հնուց ի վեր աւանդաբար փոխանցուած է եղել, որ ֆետրուար ամիսը հանդիսացել է «նոմանս»ի ամիս: Սակայն Վալենդայնի օրը, ինչպէս այն գիտենք այսօր, բովանդակած է եղեր նաեւ Քրիստոնէական ու հին Հռովմէական աւանդութիւնների հետքեր: Այսուհանդերձ, ով էր Սուրբ Վալենդայնը եւ ինչպէս է այն առնչուած հին ծէսերի հետ: Այժմ կաթոլիկ եկեղեցին ճանաչում է առնուազն երեք տարբեր Վալենդայն կոչուած սուրբեր, կամ Վալենդինոս, որոնք բոլորը նահատակուած են եղել:

Մի առասպել պնդում է, որ Վալենդայնը եղել է քահանայ, որը երրորդ դարի ընթացքում ծառայել է Հռովմում: Կլաուտիոս Երկրորդ կայսրը, նուաճողական պատերազմներ վարելու համար, հռչակել էր որ պետութեան զօրքի մարտունակ կորիզը կազմող ամուսնու մարդիկ աւելի լաւ գիւնուորներ կարող էին լինել քան ամուսնացածները, որի պատճառով օրէնքից դուրս էր յայտարարել երիտասարդ մարդկանց ամուսնութիւնը եւ ընտանիք կազմելը:

Վալենդայնը յաւակնելով կայսեր հրովարտակի անարդարութիւնը, արհամարհել էր նրա որոշումը եւ շարունակել զազանի կատարել երիտասարդ սիրահարների ամուսնութիւնները: Երբ Վալենդայնի գործողութիւնները յայտնաբերուել էին, կայսրը հրամայել էր մահուան դատապարտել նրան: Սակայն տարբեր կարծիքներ ու պատումներ կան թէ ինչ է պատահել Վալենդայնին: Ոմանք պնդում են, որ նա գլխատուել է, ուրիշներ թէ բանտում հիւանդացել ու մա-

հացել: Այլ պատումներ ենթադրում են, որ Վալենդայնը կարող էր սպանուած լինել Հռովմէական բանտում՝ այնտեղից քրիստոնէաների փախուստին օժանդակած լինելուն համար: 1835 թուականին, Հռովմում, Վալենդայնի կարծեցեալ նշխարքը յանձնուել է իր լանտացի մի քահանայի: Սեւ ու ոսկեգոյն դագաղը, Վալենդայնի ամէն տօնի ժամանակ ցուցադրուած է իր լանտայի Տուպլին մայրաքաղաքի եկեղեցում:

Մի այլ առասպելի համաձայն, Վալենդայնը բանտում եղած ժամանակ անձամբ ինքը ուղարկել էր առաջին «Վալենդայն» կոչուած սիրային ողջօցը: Հաւաստուած է, որ բանտարկութեան ընթացքում Վալենդայնը սիրահարուած է եղել մի երիտասարդ աղջկայ, հաւանաբար կարող է եղած լինել բանտապետի աղջիկը, որը յաճախակի այցելած է եղել իրեն: Ենթադրուած է, որ իր մահից առաջ մի նամակ է ուղարկած եղել աղջկան, որը ստորագրուած է եղել քու «Վալենդայնը», մի արտայայտութիւն, որը մինչեւ հիւսիս շարունակուած է փոխանակուել այս տօնին՝ որպէս սիրահարների ողջօցի խօսք: Թէեւ Վալենդայնի առասպելների հետ ճշմարտութիւններ աղօտ են, սակայն պատումները հաստատապէս շեշտում են իր անձը որպէս համակրելի, հերոսական ու ամենաարժէքաւոր ռոմանտիկ անձնաւորութիւն: Հետեւաբար զարմանալու ոչինչ, որ միջին դարերից սկսած Անգլիայում ու Ֆրանսայում Վալենդայնը ամենաժողովրդական սուրբն է համարուած:

Ոմանք հաւաստում են, որ Վալենդայնի օրը տօնախմբուել է մեր թուարկութեան 270 թուականի ֆետրուարի կէսերին՝ յիշատակելու համար նրա մահուան տարելիցը: Ուրիշներ յայտարարում են, որ Քրիստոնէական եկեղեցին կարող է որոշած լինել տօնելու Վալենդայնի հանդէսը ֆետրուարի կէսերին, «Լուբերկուլիէս» հեթանոսական խրախճանքների տօնակատարութիւնը քրիստոնէացնելու համար: Հին Հռովմում ֆետրուարը

Շաբ.ը էջ 19

Valentines Day Dinner Dance

Մասնակցութեամբ սիրուած երգիչ

ՀՐԱԶ ՊՕՂԱՐԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ

Շաբաթ, Փետրուար 13, 2010

երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ

Յ.Կ.Բ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահէն ներս

1060 North Allen Avenue, Pasadena

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել

(626) 398-0506 թիւին

Սուղքի նուէր \$35

ՓԱՐՈՒԹԱՅԻՆ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ «ՀԱՅ ՈՂԻ» ՇՔԱՆԱՇԱՆԻ ՊԱՐԳԵԲԱՏՐՈՒՄՆԵՐ



Շաբաթ Յունուար 30ի երեկոյեան աւելի քան 220 հայորդիներ հաւաքուեցան Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցոյ մէջ տօնախմբելու համար Սուրբ Սարգիս Զօրավարին Տօնը:

Արարողութեան հանդիսապետեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որուն մասնակցեցան Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քհնյ. Փեթոյեան, Հոգշ. Տ. Պարեոս Ծ. Վրդ. Երէջեան եւ Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան: Սրբազան Հայրը իր հակիրճ քարոզին մէջ շեշտեց սուրբերուն կարեւորութիւնը հաւատացեալներու կեանքին մէջ: Իր խօսքին մէջ ըսաւ. «Սուրբերը մեր մտատիպարներն ու բարեխօսներն են, որոնք մեր աղօթքները կը մատուցեն Աստուծոյ: Սուրբերը մեզի կը սորվեցնեն պահպանել մեր հաւատքը եւ ապրիլ Աստուծոյ լոյսին մէջ»:

Արարողութեան հետք եկեղեցոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որու ընթացքին Սրբազան Զօր Օրհնութեան եւ Գնահատութեան Վկայագրին եւ «Հայ Ողի» շքանշանին արժանացան Տիկին Ժանէթ Գէորգեան, Տիկին Մարկրիթ

Ղուկասեան, Տիկին Վիզի Փարեան, Տիար Յովիկ Լաջինեան, Տիար Արա Կէպէշեան, Տիկին Վերժին Աղոյեան եւ Տիկին Վարդուհի Եղլըճեան: Գալիֆորնիա Նահանգի Մերակուտական Գէորը Լուի կողմէ եւս Գնահատագրի արժանացան բոլորը:

«Այս պարգեւատրումները գնահատութեան արտայայտութիւն են եկեղեցիէն ներս երկարամեայ նուիրեալ ծառայութիւն մատուցող հաւատացեալներուն», ըսաւ Միսական Խորհուրդի Ատենապետ՝ Տիար վահէ Իսկէնտեան:

Ընթրիքի ընթացքին ներկաները խանդավառեցին դաշնակահար Լեւոն Թոմասեան եւ երգիչ Միքայէլ Արապեան: Եկեղեցոյ Յովսէփեան Վարժարանի աշակերտները հանդէս եկան աւանդական հայկական պարերով:

Փակման խօսքը կատարեց Արժ. Տ. Սարգիս Աւագ Քհնյ. Փեթոյեան՝ շեշտելով քրիստոնէական հաւատքին կարեւորութիւնը: Իր խօսքը փակեց ըսելով. «Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է եւ մենք հոս հաւաքուած ենք Եկեղեցին եւ իրար սիրելու՝ Քրիստոսի սիրով»: Ապա «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով փակուեցաւ յայտագիրը:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ «ԿԱՔԱԻԿ» ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹԻ

Լոսանճելըսահայ մամուլն ունեցաւ նոր անդամ մը եւս «Կաքաւիկ»ը: Այս մէկը տարբեր է իր տեսքով, ծաւալով ու բովանդակութեամբ, քանի որ մանկական ամսաթերթ է, հանդէս մը, մեր ոսկեղնիկ լեզուով գրուած: Հրատարակութիւն մը՝ որուն խիստ կարիքն ունէր սփիւռքի այս հայաշատ գաղութի նորահաս սերունդը:

Փետրուարի 3ին, 2010, ընտրանի հասարակութիւն մը փութացած էր Պըրպէնք քաղաքի «Շողարթ» նկարչական ցուցասրահը, ողջունելու համար «Կաքաւիկ»ի ծնունդը: Այս առթիւ գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը, որն սկսաւ Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Յակոբեանի եւ Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տէմիրճեանի օրհնութեան աղօթքով: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցոյ Յովսէփեան վարժարանի ուսուցչուհի Լիզա Մանուկեան: Ան աւանձնապէս շեշտեց հայատառ մանկական ամսաթերթի մը յոյժ կարեւորութիւնը, մատղաւ սերունդին մօտ առաւել եւս վառ պահելու սէրը զէպի մայրենի լեզուն ու գրականութիւնը:



Այնուհետեւ խօսք առաւ «Կաքաւիկ»ի խմբագիր տնօրէնուհի Ժիւլիէթ Դալթեանը: Ան իր ուրախութիւնը եւ միաժամանակ գոհունակութիւնը յայտնեց որ՝ օգտաշատ նախաձեռնութիւն մը իրականութիւն դարձած է: Երեւոյթ մը արդարեւ որ իր բարերար նպատակով պիտի բերէ հայ մանուկի հայցի դաստիարակութեան վսեմ գործին: Ապա իր շնորհակալութիւնները

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԹՄՍ-ՊԵՇԿԵՕԹԻՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՍԵՋ



Կիրակի, 31 Յունուար 2010ին, երեկոյեան ժամը 5ին տեղի ունեցաւ ճաշկերոյթ-հանդիսութիւն՝ ԹՄՍ-Պէշկէօթիւրեան Կեդրոնին մէջ՝ Ալթաթինայի նոյնանուն սրահի բարեգարգման առիթով: Զեւարկը կազմակերպուած էր Սրահի Խնամակալ մարմնին կողմէ, հովանաւորութեամբ ԹՄՍ Կեդրոնական վարչութեան:

Ներկայ էին ԹՄՍ-ի, ՌԱԿ-ի, Առաջնորդարանի, հայկական մամուլի եւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, համակիրներ ու բարեկամներ՝ որոնք խմբուած էին հիւրասիրութեան սեղաններուն շուրջ՝ գուսպ գոյնով եւ առաստաղի մեղմ լոյսով վերջերս բարենորոգուած սրահին մէջ:

Կեդրոնի Խնամակալ Մարմնի ատենապետ Գէորգ Քէօզկէրեանի բացման խօսքէն ետք բեմ հրաւիրուեցաւ «Արմինիւն Օպըրվըր» անգլիատառ շաբաթաթերթի տէր ու խմբագիր, կրթական երկարամեայ մշակ եւ ԹՄՍ Կեդրոնական վարչութեան անդամ փրոֆ. Օշին Քէշիշեան: Ան սկիզբէն ներկաներուն կողք ըրաւ իրենց նուիրատուութիւններով աստար կանգնիլ միութեան, որ սկսաւ օրուայ նախագահ Տօքթ. Վահէ Պարտազեանի 5,000 տոյար նուէրով՝ վերջաւորութեան հասնելու համար մօտաւորապէս 19,000 տոյար ընդհանուր գումարի:

Որպէս գլխաւոր բանախօս, ԹՄՍ Կեդրոնական վարչութեան անունով հանդէս եկաւ Թէքսասաբնակ տիկ. Մարօ Պետրոսեան: Ան մանրամասնութիւններ տուաւ ԱՄՆ-ի մէջ ԹՄՍ-ի մասնաճիւղերու գործունէութեան եւ Հայաստանի մէջ հովանաւորած դպրոցներու գործունէութեան մասին:

Գեղարուեստական յայտագրի երաժշտական բաժնին մէջ մասնակ-

ցութիւն բերաւ Պօղոս Օհաննէսեան (Արշակ Բ. օփերայէն, Ալվարդի Երագը, եւ իտալական օփերաթիկ երկու երգեր)՝ դաշնամուրի ընկերակցութեամբ իր տիկնոջ Ժաննա Օհաննէսեանի: Վահան Թէքէեանի «Ով Աստուած»ը մեներգեց Դաւիթ Սամուէլեան, եւ Տիգրան Մանսուրեանի «Երկիր Հալքենի» մեներգեց Խաչիկ Նահապետեան: Սեղրակ Պրոնգեան կատարողական ընթերցումով ներկայացուց սփիւռքահայ գաղթական կեանքէն առնուած երկու պատկերներ՝ «Պատահական Հանդիպումներ» եւ «Պրն. Օննիկին»:

Իսկ մեր կարծիքով օրուայ վեղարուեստական յայտագրի արժանաւոր պատկերներ էր փոքրիկն Մէրի Աւետիսեան որ իր տարիքին համար ասմունքային հազուագիւտ ըմբռնողութեամբ արտասանեց Դանիէլ վարուժանի «Նաւասարդեան» եւ Գէորգ Էմինի «Իմաստը Կեանքի» բանաստեղծութիւնները:

Երեկոյթի աւարտէն առաջ, գնահատագրեր ներկայացուեցան ԹՄՍ-ի երկար տարիներու գործիչներէն հանգուցեալ Աւետիս Մանուկեանին, յետ մահու, որ յանձնուեցաւ իր այրի տիկնոջ Անաճիտ Մանուկեանին, ինչպէս նաեւ Անդրանիկ Աֆարեանին, Խաչիկ Ճանոյեանին եւ Յակոբ Փիւստարեանին:

Այս առիթով արտանց կը շնորհաւորենք Թէքէեան Մշակութային Միութեան Կեդրոնական վարչութիւնը, պատասխանատուներն ու անդամները: Նոյն ատեն նորանոր յաջողութիւններ կը մաղթենք ԹՄՍ-ին՝ սփիւռքի եւ հայրենիքի գոյատեւման համար մշակութային ճակատին վրայ մղուող ներկայ հասարակաց բախտորոշ պայքարին մէջ:

Ս. Թ.

յայտնեց իր ծնողաց եւ հարազատներուն, որոնք խթան հանդիսացած էին եւ գինք խրախուսած իր տարիներու երազի իրականացման համար: Գնահատանքի խօսք ուղղեց նաեւ «Կաքաւիկ»ի այս համարի գլխաւոր հովանաւորող Տիկին Հայկանուշ Քոհլըրին:

Այս առիթի կարգապահուեցաւ Հայաստանի Սփիւռքի նախարարուհի տիկ. Հրանուշ Յակոբեանի ողջոյնի հեռագիրը, որով կը շնորհաւորէր «Կաքաւիկ»ը որպէս «Հայ խօսքն ու երգը տարածող սուրհանդակ» մաղթելով բարի երթ ու խաղաղ ճանապարհ:

Շնորհանդէսի աւարտին տեղի ունեցած «Կաքաւիկ» ամսաթերթի գինեձօնի արարողութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը բերին լոսանճելըսահայ մամուլի ներկայա-

ցուցիչներն ու այլ մասնակիցներ:

Մեզի համար հետաքրքրական նորութիւն մըն էր նաեւ սոյն շնորհանդէսի վայրը՝ «Շողարթ» նկարչական ցուցասրահը (Shoghart gallery), որուն գեղարուեստական տնօրէնուհին է Շողեր Պատու-Թիլքեան: Այստեղ ցուցադրուած են Շողերի ինքնատիպ ստեղծագործութիւններն ու յղացումները, որոնք իւզանկարի մը իսթապիլները տուող արուեստի գործեր են, պատրաստուած տարբեր ծաղիկներու թերթիկներով: Առանձնապէս ուշադրաւ էին իր «Վայրի Ծաղիկներ»ը, «Վերածնունդ»ը, Ա. Իսահակեանի եւ Գրիգոր Զոհրապի դիմանկարները, ինչպէս նաեւ «Բարի Օր»ն ու «Պնակ մը Նուռ»ը:

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՏԱՂԱՆԴԱԿՈՐ ՀՈԳԵԲԱՆ ՀԱՐՄԻԿ ԴԱԻԹԵԱՆԻ ՅՈՒՇ ԵՐԵԿՈՆ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Խորիմաստ եւ յուզումնալից միջոցառում հետեւում եմ կազմակերպում յուշ-սգահանդէսին մեր Գլխաւորի Քաղաքի Իրանահայ միութիւնում: Հոն թուով ներկաներ, առաւելաբար իրանահայեր, իրենց հայեացքը չառած բեմին խոր լուծեամբ ունկնդրում են յաջորդաբար ներկայացող անձերի ելույթը: Դահլիճը մուտք գործողի համար արդէն ամէն ինչ պարզում է, երբ դիմացը սեղանի վրայ նկատում է նրա շրջանակում գունաւոր պատկերը սեղանի վրայ աջին ու ահեակին երկու պլպլացող աշտանակներով մոմեր՝ երկու պահապան հրեշտակների ներկայութիւնը խորհրդանշող: Այդ խոհուն ու մտածկոտ պատկերը անցեալի շատ յուշեր է արթնացնում ճանաչողաց մտապատկերում իր կեանքին առնչուող: Մտաբերում է նրա արժանիքները, ներհուն մտաւորականի աշխատանքները, Իրանի հոգեբանութեան բնագաւառում իր մեծ ներդրումը եւ անվերապահ ծառայութիւնները մեր թեհրանահայ համայնքին: Նա անբացակայ ներկայութիւն է եղել պատգամաւորական ժողովի եւ թեմական խորհրդի կազմում՝ երբեմն անդամ, երբեմն՝ նախագահ, երբեմն՝ ազգային ժողովի ներկայացուցիչ:

Բեղումնաշատ գիտնական անձանց մահը մեծ կորուստ է համարում, սուգը մեծ եւ անփոխարինելի ցաւ եւ կսկիծ է պատճառում, բայց մի այլ տեսակէտից սփոփանք եւ մխիթարանք է իրենց թողած յարախօս ականդով: Հարմիր Դաւթեանը իր տաղանդով եւ մեծ ծառայութեամբ պատիւ էր բերում իւրաքանչիւր հային:

Արդարեւ նա հոգեբանութեան բնագաւառում անգնահատելի էր, ինչ է նշանակում լինել աշխարհի հինգ նշանաւոր հոգեբաններից մէկը, ակադեմիաների անդամ, գիտական յօդուածների եւ հոգեբանական գրքերի հեղինակ:

Յուշերեկոյի բացումը Լոս Անջելէսի Իրանահայ միութեան նախագահ տիկ. Պերճուհի Ղեւհեանի կողմից ճիշտ նշուած ժամին ապացոյցն էր ծրագրի կազմակերպուած լինելը: Վիզիով ցուցադրուած հոլո-վակները ազդեցիկ տպաւորութիւն թողեցին ներկաների վրայ, նկատելով որ՝ ուղղակի պարսից հեռուստակայանի խօսնակի պատրաստած ծրագիրն էր պետութեան կողմից կազմակերպուած յուզարկաւորութեան:

Պրն. Գրիշ Դաւթեանի գրաւոր խօսքը արժեւորումն էր նրա գիտական եւ հասարակական կեանքի երկար ուղին, նա ներկայացրեց նրա կենսագրութիւնը եւ կեանքի տարբեր հանգրուանները, յաջողութիւնները եւ պարգեւադրումները պարսից, Հայաստանի եւ միջազգային կազմակերպութիւնների կողմից: Գեղարուեստական բաժնի կատարողները՝ Անի Ալվազեանը դաշնամուրով նուագեց Կոմիտասի «Գարուն ա»-ն, Սաֆո Նազարեանը երկու երգեր երգեց՝ գուսան Աշոտի «Անցազ գնացի»-ն եւ «Մոռանալ-մոռանալ» Գալանդեբեանից Ալեհուշ Եղնազարի դաշնամուրի նուագակցութեամբ,

Պրն. Ռազմիկ Շահգեղեանը արտասանեց «Կը գամ» Համօ Սահեանից եւ դոկտորի Շաքէ դատեր շնորհակալական խօսքի ընթացումը ուղղուած բոլոր ներկաներին: Գեղարուեստական բաժնի կատարումները յուզիչ եւ տպաւորիչ էին:

Դր. Առնուղ Բերնարդին իր բովանդակալից եւ ընդգրկուն յուշերով հարազատօրէն ներկայացրեց իր 70 տարիների մտերիմ ընկերութեան տպաւորութիւնները դոկտորի հետ սկսեալ դպրոցական աթոռից: Նա բարձրօրէն վեր հանեց նրա կեանքի տարբեր երեսները՝ մտածելակերպը, խառնուածքը, ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը, ընկերասիրութիւնը, մարդասիրութիւնը, գիտնական մարդը եւ նուիրեալ քաղաքացին: Նա իր բովանդակալից արտայայտութեան մէջ յիշեց այն օրերը, երբ հայրենադարձութեան համար մեր ժողովուրդը գիւղերից շտապել էին քաղաք հայրենիք մեկնելու համար: Նրանք կապրէին խմբական դժուարութեանց մէջ եւ թէ ինչպէս նրանց բժշկական կարիքները դոկտորի հետ միասնաբար իրագործելու անհնար էր: Նա նկատել տուեց, թէ ինչ եւ դոկտորը Հայ-Համալսարանական միութեան հիմնադիրներից են եղել, այն օրերին միութիւնը մեծ օգտակարութիւն ունեցաւ:

Պրն. Սեպուհ Յովհաննիսեանի գրաւոր ուսումնասիրուած խօսքը նրա գիտական եւ հասարակական կեանքի մեծ նուաճումների եւ ձեռքբերումների մասին էր:

Հոփսիսիկ Դաւթեանի խօսքը որպէս նրա կեանքի ընկեր-կողակիցը արժէքաւոր տեղեկութիւններ փոխանցեց ընտանեկան կեանքի եւ նրա բարձրարժէք հեղինակութեան մասին պարսից եւ հայ ինտելիգենտ շրջանակներում: Նա սրտագին հայ միութեան եւ բոլոր ներկաներին, որոնք ներկայ էին գտնուել յուշերեկոյին յարգելով դոկտորի յիշատակը: Ելույթ ունեցողները եւ ներկաները խորապէս ափսոսացին նրա ցաւալի մահուան առիթով նկատի ունենալով նրա արժանաւոր եւ պանծալի կեանքն ու համբաւը:

Գնահատանքի արժանի յուշերեկոյ, որն արտայայտում էր անխառն սէր ու յարգանք նրա կեանքի հանդէպ: Անշուշտ կարելի էր աւելի ընդգրկուն ծրագիր ունենալ հրաւիրելով պարսիկ եւ համայնքային հեղինակաւոր դէմքեր:

Ներկաները հիւրասիրուեցին սուրճով առ ի խաղաղութիւն հոգւոյն նորոգ հանգուցեալի:

Յիշատակն արդարօրոյն օրհնութեամբ եղիցի:

ՀԲԸՄ-Ի ԱՐՏԱԻԱԶԴԻ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՕՐԵՆՔ ՔԱՌՆՔԻԻ ԲԵՄԻՆ ՎՐԱՅ

ԳԷՈՐԳ ՔԷՕՇԿԵՐԵԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Արտաւազգեթատերախումբը տասն անգամ ներկայացուց անմահ ներկայացուցիչ Գալանդեբեանի «Քաղաքավարութեան վնասները»՝ Փաստինայի իր կեդրոնի սրահին մէջ, Նոյեմբեր 21-էն Դեկտեմբեր 20-ի միջեւ երկարող շաբաթավերջերուն: Աւելի քան 2,500 հայտորդիներ ներկայ գտնուելով հոգեպէս բաւարարուեցան եւ իրենց գեղարուեստական պապակը անգամը եւս յագեցաւ, սրտի անհուն գոհունակութեամբ բաժնուելով սրահին:

Օրէնճ Քառնթիի ՀԲԸ Միութեան շաբաթօրեայ դպրոցի վարչութեան թախանձագին խնդրանքին վրայ, թատերախումբի վարչութիւնը՝ նիւթապէս աստար հանդիսանալու հայ մանուկի կրթութեան ծախսերուն, համաձայն գտնուեցաւ կրկնելու վերոյիշեալ կատակերգութիւնը՝ այդ գաղութի մշակութասէր հասարակութեան համար:

Ուրեմն՝ Կիրակի, 24 Յունուար 2010-ի յետ միջօրէի ժամը 5-ին, Սբ. Քառասնից Մանկանց Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ Ղուկասեան սրահը ժամադրավայրը հանդիսացաւ այդ հրճուանքին: Արդարեւ՝ աւելի քան 240 թատերասէրներ կանուխէն լեցուցած էին սրահը, վայելելու ՀԲԸ Միութեան Արտաւազգեթատերախումբի ներկայացուցիչը՝ երկու արարներէ բաղկացած Յակոբ Պարոնեանի «Քաղաքավարութեան վնասները» կատակերգութիւնը:

Հանդիսատէսներու երկու ժամուռայ գոհունակութիւնը յստակօրէն կ'արտացոլար անոնց դէմքերուն վրայ եւ անոնք ծափողջուներով եւ ծիծաղով կ'արտայայտէին իրենց զգացումները, մեծապէս ըմբոշինելով Պարոնեանի ստեղծած եւ Արտաւազգի մեկնաբանած երգիծական բացառիկ վայելքը:

Ներկայացումէն ետք մօտաւորապէս 200 հանդիսատէսներ եւ թատերախումբի անդամները բոլորուեցան ճաշի սեղաններուն շուրջ եւ վայելեցին Մարկոյի պատրաստած հայկական համադամ աղանդերներն ու ճաշերը:

Ամէն անգամ որ Արտաւազգեթատերախումբը հրաւիրուի Օրէնճ Քառնթիի սովորութիւն դարձած է որ ներկայացումէն ետք անպայմանօրէն տեղի ունենայ ճաշկերոյթ եւ անոր ընթացքին՝ գուարթիսոսութեան պահ:

Այս անգամ այլ բացառութիւն մը չէր կրնար կազմել այդ աւանդութեան մէջ եւ արդարեւ նոյն սրահին մէջ՝ ճաշկերոյթէն ետք տեղի ունեցան անպատրաստից գուարթիսոսութեան անմոռանալի պահեր, թատերախումբի անդամներուն մասնակցութեամբ:

Առաջին առթիւ բեմ հրաւիրուեցաւ թատերախումբի բեմադրիչ՝ արհեստավարժ դերասան Գրի-

գոր Սաթամեանը: Ան իր ինքնուրոյն երգիծանքով ներկայացուց դրուագներ, քաղուած թատերական գործով կատարած իր ճամբորդութիւններու ընթացքին:

Գիտենք որ աշխարհի զանազան գաղթօճախներու մէջ ապրող հայեր անպայմանօրէն կ'ենթարկուին տեղական լեզուի շեշտի ազդեցութեան եւ իրենց հայերէնը կ'աղաւաղուի, անոնց տիրապետութեան ներքեւ: Այսպէս՝ Ֆրանսահայը եւ Արժանթինահայը բոլորովին տարբեր առողանութեամբ կը խօսին հայերէն լեզուն եւ մեզի համար այդ կը թուի հաճելի կերպով ծիծաղելի, թէեւ ընդունելի: Հակառակն ալ կրնայ հեշտուութեամբ պատահիլ, այսինքն՝ անոնք ալ հասկնալիօրէն կրնան ծիծաղելի գտնել մեր խօսած հայերէնը ...

Յատկապէս գուարճանալի էր Սաթամեանի Պուէնոս Այրէսի մէջ՝ թանկօ պարելու եզակի փորձառութիւնը, որու պատմականը երբ ներկայացուց՝ հանդիսատէսներէն ան խլեց ծափողջուներու անյատնում տեղատարափ մը:

Հուսկ ապա բեմ հրաւիրուեցաւ թատերախումբի վեթերան անդամներէն Մարո Աճէմեանը: Պէջրութէն վիրաւորուած հօր մը՝ իր փեսային գրած աղերսական նամակի մը հայերէն ընթերցումն ու անոր անգլերէնի բառացի թարգմանութիւնը ներկայացուց ան, խնդուքի ալիքներ խլելով հանդիսատէսներէն: Հասկնալիօրէն՝ բառացի թարգմանութիւնը որեւէ գրութեան մը տարբեր իմաստ մը կը ներկայացնէ հարազատ գրութեանէն եւ այդ շատ յաճախ կը դառնայ ծիծաղելի:

Երեկոյի վերջին ելույթը ներկայացուեցաւ թատերախումբի երիտասարդ անդամներէն Նարինէ Աւագեանի եւ Արփի Սամուէլեանի կողմէ: Անոնք մեզի հրամցուցին Վիէթնամցի մագալարողարի մը սալօնին մէջ տեղի ունեցած՝ աղաւաղուած անգլերէնով խօսակցութիւնը, եղունգներու մաքրութեան վերաբերեալ: Իսկապէս հիանալի էր անոնց հարազատ բնութագրութիւնը՝ այդ իրական պատահարին:

Որպէս եզրակացութիւն՝ ելույթ ունեցաւ Օրէնճ Քառնթիի շաբաթօրեայ դպրոցի պատասխանատուներէն Գրիգոր Մահտեսեանը: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց Արտաւազգեթատերախումբի վարչութեան՝ որ ընդառաջած էր իրենց խնդրանքին, եւ ապա բոլոր հանդիսատէսներուն՝ որոնք իրենց ներկայութեամբ քաջալեր հանդիսացան հանրային վարժարան յաճախող հայ աշակերտի ողիսականին:

Պատրաստուեցէք ՀԲԸ Միութեան Արտաւազգեթատերախումբի յաջորդ ելույթին, որ պիտի ըլլայ Ֆրանսացի հին եւ նոր կատակերգակ հեղինակներէն՝ Մոլիէրի եւ Ֆէլետոյի մէկական արարնոց երգիծական թատերախաղերը:

ՇՆՈՐԱՆԴԵՍ «ԿԱՔԱԻԿ» ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄԱԹԵՐԹԻ

Շարունակուած էջ 14-էն

Յուցասարահի այլ նկարիչներու գործերուն մէջ մեր ուշադրութիւնը գրաւեցին Նորիկ Տիւրանեանի երանգապնակի արգասիքն եղող «Բամբասանք» ու Սամուէլ Համբարձումեանի «Երագի Աղջիկ»ը եւ կաւէ պատրաստուած արուեստի այլ գործերը:

Կը շնորհաւորենք հայ մամուլի ընտանիքի նոր անդամին «Կաքաւիկ» մանկական ամսագրի լոյս աշխարհ գալը, մաղթելով յարատեւութիւն, դալար ճանապարհ եւ յաջողութիւն իր նուիրական առաքելութեան մէջ: Մեր գուզընթաց մաղթանքները նաեւ «Շողարթ» ցուցասրահին:

Գ. Մալոյեան

ՅԱԻԱԿՅԱԿԱՆ

ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՒԲԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ «Նոր Սերունդ» հեռուստա-թատրոնի վարչութիւնները իրենց խորագրաց վշատակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աջրիին՝ Տիկ. Անահիտ Խրլոբեան-Սեղրակեանին, դուստրերուն, եղբօր եւ համայն ընտանեկան պարագաներուն:

ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՒԲԵԱՆԻ մահուան տխուր առիթով Պէլլանի Հայրենակցական Միութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի աջրիին՝ Տիկ. Անահիտ Խրլոբեան-Սեղրակեանին, եղբօր՝ Նորայրին, դուստրերուն, եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ԵՐՈՒԽԱՆ (ԵՐՈՒՎԱՆԴ ՍՐԱՎՔԷՇԽԱՆԼԵԱՆ) ՆՈՎԵԼՆԵՐ

Ս. Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
(Շարունակում և նախորդ թիվում)

Երուխանի գրական բեմելի ուշագրաւ գործերից է «Մեզատուճին» նովելը: Նորայգիի հերոսը՝ քանանեայ Գառնիկը, խաղաղիքներ է վաճառում: Վաղ լուսաբացից մինչեւ ուշ երեկոյ նա իր խաղաղիքների կողովը շրջում է փողոցներում եւ հազիւ կարողանում է իր եւ մօր օրական հացի դրամը վաստակել: Այդքանով, սակայն, նա բաւարարուած է, գգում է, որ խիղճը հանգիստ է: Բայց ահա նրանց տան կողքին յայտնուած են հարուստ հարեւաններ: Գառնիկը սիրահարուած է այդ ընտանիքի միակ աղջկան՝ Սաթենիկին: Անարձագանք սէրը, աղջկայ թունոտ արհամարհանքը խոռովում են երիտասարդի հոգեկան աշխարհը՝ առաջացնելով տրամադրութեան ստակիլի անկում: Գառնիկը բոլորովին փոխուած է: Սկսում է ծուլանալ, յաճախակի տուն է վերադառնում հարբած վիճակում՝ խորապէս վշտացնելով կեանքի դառնութեան բաժակը ըմպած, բայց միշտ հոգատար մօրը: Սաթենիկը պատկուած է մի հարուստ երիտասարդի հետ: Հարսանիքի օրը Գառնիկը դաշոյնի հարուածով ապանում է իր երջանկութիւնը խլոզ փեսացուին եւ ինքնապատկանութեամբ վերջ տալիս նաեւ իր կեանքին:

Երուխանը խոր սիրով ու հիացմունքով է նկարագրում «կորովի լանջով, հաստապինդ սրունքներով, բաց ու անկեղծ դէմքով» իր հերոսին, որը «ժողովրդային նկարագրի դասակարգին» գաւակն է: Գառնիկի մարմինը «առողջութիւն կը բուրդէր անկողին մտած առեւնը»:

Հանգուցեալ հայրը մեռնելուց առաջ որդուն է յանձնել իր աշխատանքային գործիքը՝ աւանդական չաւեյան (կողովը)՝ կտակելով. «Գառնիկ, գաւակս, նայէ քի միւշտերին հելլալ ընէ տուած փարան, գէշ բան է խաբելը, կը կործանիս, անօթութեանէ կը մեռնիս, էջեր գաւակ ունենաս նէ, անոր ալ ասանկ խրատ տուր»: Որդին շարունակում է հօր գործը՝ հաւատարիմ նրա կտակին, աշխատելով բեռ չկրել խղճի վրայ, հեռու մնալ նենգամտութիւնից:

Գառնիկի եւ մօր նսեմ վիճակը դեռեւս աղքատութեան եւ թշուառութեան վերջին աստիճանը չէ. չէ՞ որ նրանք օրուայ սեւ հաց կարողանում են հայթայթել: Կան աւելի վատթար դրութեան մէջ ապրող ընտանիքներ: Օրուայ կրած անյաջողութեան առթիւ որդուն միտիթարելու համար իսկուհի տուտուն ասում է. «Գառնիկ, գաւակս, ֆուլթուղ պոլէ մընէր, ես ցամաք հացին ալ խանաթ կ'ընեմ, այսօր քի՞չ վաստկեցար, վաղը Աստուած շատ կը խրկէ, մէջ մը մտմտայ քի մեզմէ տահա պեթերները կան»:

Իսկուհի տուտուն հեզ ու բարի կին է, միշտ քշով գոհացող: Երուխանը սեղմ տողերով ցոյց է տալիս այդ կնոջ անասանմանօրէն քնքուշ սէրը իր որդու նկատմամբ: Նա հիւանդ որդուն գնում է, ինչպէս «հետաքրքիր բնագէտն իր հիւլէածեւ միջատը»: Սակայն իսկուհի տուտուն դատապարտուած է կոշտ ու կոպիտ կոշուելու, որովհետեւ աղքատ է. «Ի՞նչ կը գգար այդ մայրը, ժողովուրդի ստորնագոյն դասի այդ մայրը, որ դատապարտուել է յար թուք ու մուր ընդունիլ գարգացեալ կարծուած բարձր դասին, որ կ'անարգուի, իբր կոշտ,

անկիրթ ու անգգայ արարած»: Այս տողերն անգամ բաւական են կուահելու համար, որ կողք-կողքի ապրող հարուստ եւ աղքատ ընտանիքների միջեւ կոնֆլիկտ կայ, որը, սակայն, չի բացալայտուած գրողի ստեղծագործութեան մէջ:

Գառնիկն գգում է իր մարդկային բարձր արժանիքները, համոզուած է, որ ինքն արժանի է Սաթենիկի սիրուն, սակայն նա քաջ պատկերացում է նաեւ, որ նման դէպքերում որոշիչը մարդկային արժանիքները չեն, այլ հարստութիւնը՝ դրամը, ոսկին, եւ նա ցաւով արտայայտում է հետեւեալ միտքը. «աշխարհքին ըռեկոլան ասանկ է հիմա, խերն անիծեմ ասանկ ըռեկոլային»:

«Աղքատութիւն եւ նսեմութիւն, - գրում է Երուխանը, - տեսակ մը թանձր ու սեւ վարագոյրներ կան, որուն տակէն խեղճ, թշուառ արարածներ կը սողոսկին, կ'երթան, կ'անհետին՝ առանց նշմարուելու այն աչերէն, որք արեւին եւ ոսկին փայլը կը տեսնեն յարժամ: Գառնիկ այդ սգատեսիլ վարագոյրին տակ կը տառապէր, Սաթենիկ լուսաւոր վերնագաւառին մէջ կը խրախուսանար ու դէպի վար ակնարկ մը իսկ չէր նետեր»: Եւ իրօք, Սաթենիկը, ժանեակներով ու շողակներով գարդարուն գետնաքար զգեստը հագին, իր ճոխ ու պերճապալ բարձրութիւնից արհամարհանքով է նայում ընչազուրկ մարդկանց: Այս տեսակէտից շատ հետաքրքրական է Սաթենիկի եւ մօր միջեւ տեղի ունեցած դիալոգը.

- Մայր, - ըսաւ ասդին դառնալով ու շփացած ձայնով մը, - աս սրիկան ո՞վ է, որ ասանկ գէշ-գէշ ինծի կը նայի կոր:

- Տեսնեմ, ըսաւ մայրն ու պատուհանէն դուրս հանեց գլուխը: Ճանչցայ, աս քովի փլիկած տունին տղան է, մեզատուճի է:

- Ամա ինչո՞ւ այդպէս կեցած կը նայէր ինծի:

- Կարելի է քեզի շատ հաւնած է, - պատասխանեց մայրը քմծիծաղով մը:

- Ա՛ն, մեզատուճին:

- Այո, ի՞նչ կայ որ:

- Մայր, տարօրինակ բաներ կ'ըսես, ան ի՞նչ գիտէ աղուոր տղեղը:

- Ինչո՞ւ չի պիտի գիտնայ, ան մարդ չէ՞:

- Չէ:

Գառնիկը իր մարդկային արժանապատուութիւնը վիրաւորողների նկատմամբ լցում է բուռն վրէժխնդրութեամբ: Նա ըմբոստանում է իր երջանկութիւնը խլոզի դէմ՝ սպաննելով նրան, սակայն տեղն ու տեղը նա ինքնասպանութեամբ վերջ է տալիս նաեւ իր կեանքին՝ մարմնից յորդացող արեան շիթերի եւ մարուող հայեացքի մէջ խտացնելով իր եւ իր դասակարգի մարդկանց գայրալից բողբոջ անարդար իրականութեան դէմ:

«Մեզատուճին» Երուխանի միակ նովելն է, որտեղ հերոսը գէնքի է դիմում եւ տարերային պայքարի նետում հարուստների դէմ: Ցաօք, ըմբոստացման այս գիծը Երուխանի նովելներում որակ չի կազմում, եւ նրա միւս հերոսները լուռ համակերպում են իրենց վիճակի հետ եւ վերջին հաշուով անտրտունը ու անշշուով գոհ գնում սոցիալական անհաւասարութեան տարերքին, ինչպէս երկնքից պոկուող եւ յաւերժութեան մէջ անձայն մարդկային աստղ:

Երուխանն իր մի շարք նովելներում հոգեբանական ամենանուրբ երանգներով պատկերում է աշխատաւոր մարդկանց մաքուր ու անբիծ սէրը: Սակայն սոցիալական անապահով վիճակի մէջ տապալուող նրա հերոսներին սէրը երջանկութիւն չի բերում («Մովափին աղիկը», «Լուսացարուհին», «Թաշկինակը», «Պատիկ Սեփին Պատմութիւնը»): Անձնուրաց սիրոյ եւ նուիրումութեան անթաւան պատկեր են սրանք:

Կեանքի դժնդակ պայմանների հետեւանքով իր սիրած աղջկան վաղաժամ գերեզման դրած, բայց մինչեւ խոր ծերութիւն սիրոյ եւ հաւատարմութեան անշէջ հուրը սրտում փայտալոյզ, վշտածեծ ու ալեհեր ծերունին մնում է իր դասակարգի մարդկանց լաւագոյն բարեկամն ու բարերարը («Հաճի Մանուէլ»):

Երուխանը քննադատում է հաշուեկատ եւ միայն նիւթական շահի վրայ հիմնուած խախուտ սիրոյ գաղափարը: Նրա մի շարք հերոսներ չնայած կապուած են ջերմ ու փոխադարձ սիրով, բայց չեն կարողանում վայելել սիրոյ երջանկութիւնը եւ դժբախտանում են բացառապէս սոցիալական տարբեր դիրքերում գտնուելու պատճառով («Կը ժպտի», Երկու Երդուները», «Տապանագիրը»):

Երուխանի այս շարքի նովելներից շատերը ունեն աչքի ընկնող մի առանձնապատկութիւն: Դա այն է, որ նրա հերոսները սէր են տածում հարուստ դասակարգի աղջիկների նկատմամբ («Ձուկին փոխարէն», «Սայլորդը», «Քարիտեզճին», «Թաշկինակը», «Ջրհանկրի մը պատմութիւնը», «Սերինա»): Պարզ է, որ Երուխանը նմանօրինակ սիրոյ քօղի տակ աւելի շատ ձգտում է բացալայտել հասարակական կեանքում թաղաւորող սոցիալական անհաւասարութիւնը: Նկատելի է, որ Երուխանը այս գիծը յատուկ շեշտուածութեամբ գարգացնում է նաեւ իր «Ամիրային Աղջիկը» վէպում: Բոլոր դէպքերում Գ. Ջոհրայի նման, Երուխանն էլ չի խրախուսում սիրոյ այդ կապը: Ընդհակառակը, հեղինակը ցոյց է տալիս, որ խոնարհ դասակարգի մարդկանց ձգտումը՝ վեր բարձրանալ աղքատի միջավայրից եւ սէր որոնել հարուստ ընտանիքներում, ծնում է ողբերգութիւն նրանց անձնական կեանքում:

Մի շարք նովելներում Երուխանը անողոք կերպով դիմակագրած է անում աշխատաւոր ժողովրդի կրօնական ջերմեռանդութիւնը չարաշահող հոգեւորականների այլանդակ վարքն ու բարքը: Եկեղեցու սպասաւորները ազգահան, անկիրթ, յարմարուող: Նրանց ընչաքաղցութիւնը գազանային բնոյթ է կրում: «Ետքէն կը ժպտի» նովելում պատկերուած քահանան կրճատում է երկու երրորդով աղօթքը, որովհետեւ հանգուցեալը աղքատ է: Նրա ցուցումով եկեղեցու սպասաւորները դազաղը վազքով են տանում եկեղեցի՝ ըրպէս առաջ ծիսակատարութիւններն աւարտելու եւ այն հողին յանձնելու համար: Սակայն անապահովութիւնը յայտնուած է հանգուցեալի հարուստ ազգականը: Քահանան ուրախութիւնից այժմ շոյում է մօրուքը, ամէն ջանք գործադրելով, որ յուղարկաւորութիւնը հանդիսաւոր բնոյթ կրի: «Տէր պապային հինգերորդ տունը» պատմութեամբ հերոսը Տէր Նիկողիմոս քահանան է: Նա տգէտ է, բայց ճարպիկ ու քծնող, ունի սողունի բոլոր յատկութիւնները: Քամեկիտին նման վարպետօրէն փոխելով իր գոյնը եւ յարմարուելով ժամանակի պահանջներին, Կ. Պոլսի լաւագոյն թաղամասերում կառու-

ցում է չորս տուն: Հինգերորդ տունը, որի հողաշէն պատերը արդէն բարձրացել էին նրա հիւանդոտ երեւակայութեան մէջ, փլչում է միայն քաղաքական դէպքերի ձախորդ բերումով: Այս տեսակէտից ուշագրաւ են նաեւ «Կնուսքը» եւ «Յաջողութեան գաղտնիքը» պատմուածքները:

Երուխանի սարագրութեան տարիներին գրած նովելների միտումը թրքական եաթաղանից հայածուած եւ օտար եզերքներում դեգերող հայերի հոգեկան մաքրութիւնը սրբօրէն պահպանելու, ժամանակի մաշիչ ազդեցութեանը կուլ չգնալու հարցն է: Ֆիզիքական բնաջնջման սպառնալիքը, գաղթը, պանդխտութեան հոգեմաշ ուղիները, օտար երկիրը իրենց բացասական ազդեցութիւնն են գործում բնաւէր հայերի հոգեբանութեան վրայ: Գաղթականների կեանքը հարուստ է թանձր խաւարով, ծանր երկունքներով, տրամադրութեան հակամեծերով եւ ծայրայեղ յուսալքութեամբ: Չնայած այս ամէնին, անհրաժեշտ է անբիծ պահել սեփական ժողովրդի արժանապատուութիւնը, օտարին ցոյց տալ իր բարոյականացին բարձր յատկանիշները: Այս իդեան կարմիր թելի նման անցնում է գրողի բազմաթիւ նովելներում:

«Գաղթականութիւնը տեսակ մը ֆապրիկա է, - գրում է Երուխանը, - որուն մէջ նկարագիրները կը ծեծուին, կը դարբնուին ու կը կաղապարուին... կեղծիք, ծեքծեքանք կ'անհետին. Գաղթականութեան մէջ, ուր կ'ապրինք, ուսումնասիրութեան տիպարները բազմաթիւ են»: Երուխանն իր այս շարքի նովելներում եւ պատմուածքներում կերտել է գաղթական հայերի բազմաթիւ կերպարներ, պատկերել հայ գաղթականների ճակատագրական ողբերգութիւնը: «Կեկրեքճին» պատմութեամբ հերոսը վաթսուս տարեկան ծերունի է: Գաղթականութեան տագնապների մէջ նա մուրացկանի նման ձեռք չի պարզում, յոյս չի դնում ողորմասէր օտարների նպաստների վրայ, այլ յոգնաբեկ մարմինը օրնիբուռ շրջում է փողոցներում, վաճառում է պաքսիմատ եւ ապրում իր տանջալից աշխատանքի եկամտով: Սակայն նոյն պատմութեամբ Երուխանը անարգանքի սիւնին է գամում հայ պնդակազմ երիտասարդին, որ դեգերում է փողոցներում ու սրճարաններում՝ տաղտկալի տրտունջը շրթներին: Հեղինակն ստեղծում է կոնտրաստ ջանասէր ծեր կեկրեքճու եւ անվթար կազմուածքով, բայց ձեռքը մուրացկանի պէս երկարած գաղթականի միջեւ:

«Արեանի ուժը» այս ցիկլի յուզիչ պատմութեամբ քննարկ է: Հայկական կոտորածների ժամանակ քանդուել է եթեմաստեանամեայ կնոջ օճախը: Ընտանիքի բոլոր անդամները սրի են քաշուել: Մեր կինը կարողացել է փրկել իր երեք թոռներին՝ փախչելով պանդխտութեան ուղիներով: Թոռների ծանր բեռի տակ կքուած տատիկին են մօտեցել օտար շատ մարդորաներ. «Տուր, - կ'ըսեն, - այդ տղաքը մենք մեծցունենք»: Իսկ մամիկը «սիրտը արցունքով ու վրէժխնդրութեան կրակով հրդեհուած» ահարկու ձայնով մը, - ոչ, - կը մոռնէ, - չեմ ի տար թոռներս»: Մեր կնոջ դէմքի կնճիռներում եւ ցասկոտ հայեացքում Երուխանը խտացրել է հայ բազմաթիւ վարատական ու խորշակահար ընտանիքների կակալի պատմութիւնը: Այդ կնոջ վարքագիծը հերոսական է: Նա անձուրաց կերպով

ՉՈՒԳԱՅԵՌՆԵՐ ՐԱՖՅԻՒ ՎԵՊԵՐԵՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Մարունակուած էջ 7-էն

տանի, Բելուջիստանի կամ Բուխարայի խորքերում մի քանի տուն հրեաներ, նրանք դարձրելով ապրում են այնտեղ եւ օր ըստ օրէ անում են, բազմանում են, որովհետեւ շատ սերտ կերպով միացած են միմեանց հետ: Բայց հայ գաղթականները, մինչև միւսին ոչնչացնելով, վերջապէս սպառում են: Որտեղ երկու տուն հայեր կան, նրանց մէջ չորս կուսակցութիւն կայ: Ամբարանութիւնը վաղեմի ժամանակներից մեր ազգի կեանքի մէջ այն ուտող, մաշող ցեղն է եղել, որ ժառանգաբար անցել է մեզ, եւ որ սպառել է ազգային մարմինը: Մեր պատմութեան մէջ կարող է տեսնել հազարաւոր օրինակներ, մանաւանդ այն դարերում, երբ պարսիկները, յոյները, արաբացիները, սելջուկները եւ մոնղոլական զանազան ցեղեր կրակով եւ արիւնով ոչնչացնում էին Հայաստանը: Նրանց առաջնորդները միշտ եղել են իրանիական, եւ միշտ հայերից միացած են եղել թշնամու հետ: Այժմ հասկացա՞ր, սիրելի բոյր, թէ ինչի՞ց են յառաջ գալիս այս մատուցումները, որ բեզ այսպէս խոնավեցնում են:

- Բայց մի՞թէ օտարի լուծը անելի քաղցր է, - հարցրեց տիկինը վշտացած ձայնով:

- Այո՛, հայր սիրում է օտարի լուծը: Մեր պայքարը չէի՞նք, որ դիմեցին պարսից Վոսմարայի եւ նրանից խնդրում էին, որ հայ թագաւորը վեր առնէ եւ նրա տեղը պարսիկ մարզպան դնէ, եւ այսպիսով կործանեցին Արշակունեաց հօր պետութիւնը: Դարձեալ մեր պայքարը չէի՞նք, որ Անիի բանալիները ուղարկեցին յունաց կայսրին եւ իրանց ձեռքով Բագրատունեաց թագաւորութեան հիմք փորեցին: Եւ մեր Վասպուրականը, որ մի ժամանակ հայոց առանձին թագաւորութիւն էր, Արծրունի Սեմեմերիմ թագաւորն իր հանութեամբ յանձնեց յոյներին եւ Սեբաստիայում սկսեց խաղաղ կեանք վարել: Եւ այդ բոլորը գործողը ո՞վքեր էին, ժողովրդի իշխանները եւ նրա հոգեւոր գլուխը՝ կաթողիկոսը: Այժմ շատ զարմանալի չէ, որ մի անպիտան վարդապետ եւ մի քանի շահամուլ իշխաններ դաւ են դնում մի քանի երիտասարդների դէմ, որոնց նպատակը շատ բարի է եւ համեստ, որոնք, բացի ժողովրդի հանգստութիւնը, ուրիշ բանի չեն ձգտում:

- Բոլորովին ուղիղ է, - պատասխանեց տիկինը, - եւ մեր պատմութիւնը չեմ կարդացել, բայց իմ աչքով տեսել եմ, թէ ինչպէս շատ անգամ հայերն իրանք եկել են իմ (թուրք) ամուսնու մօտ եւ միմեանց վրայ մատուցումներ են արել: Մատանգամ նոյնը նկատել եմ եւ փաշայի տան մէջ: Թուրքերի մէջ արդէն առած է դարձել ասել՝ թէ «զատութեան գլուխները չեն միանայ», որ կը նշանակէ, թէ հայերի մէջ միաբանութիւն չէ կարող կազմուել: Ցաւալի է մի այսպիսի կարծիքը, եւ անելի ցաւալի է, որ նա ուղիղ է...

Տէր Հայրը մի առանձին ուշադրութեամբ լսում էր բոց խօսքերը եւ կարծես ուրախանում էր նրա դատողութիւնների վրայ:

- Եւ շատ հետաքրքիր եմ եղել ուսումնասիրել մեր ժողովրդի բնաւորութիւնը, - ասաց նա, - բայց մինչեւ այսօր շատ բաներ մնացել են ինձ անհասկանալի: Օրինակ,

հայր ոխերիմ է, մատնիչ է, վրէժխնդիր է այն անարգանքի դէմ, որ նա կրում է մի այլ հայից: Բայց եթէ նոյն անարգանքը նա ստանում է տանիկից, բուրդից, մի խօսքով՝ օտարից, նա ամենայն խոնարհութեամբ համբերում է: Դա, իմ կարծիքով յառաջ է գալիս այն հանգամանակներից, թէ հայը տանիկի եւ բուրդի առջեւ թոյլ է եւ չէ կարող նրանցից պատիւ պահանջել: Այլ անելի յառաջ է գալիս այն օտարամուլ նախապաշարմունքից, որ հայը տանիկի եւ բուրդի մէջ մի առանձին իրաւունք է նախաձեռնում իր հետ ամէն կերպ վարուելու: Եւ այսպէս, ոչ միայն պատուի զգացմունքը, այլ հայի բոլոր պահանջումները՝ օտարի եւ իր ազգակցի վերաբերութեամբ՝ միատեսակ չեն:

Տէր հօր խօսելու միջոցին եւ նկատեցի նրա բոց երեսի վրայ խիստ տխուր արտայայտութիւններ:

- Եւ կը բերեմ մի ուրիշ օրինակ, - յառաջ տարաւ նա, - հայ ծառայողը իր պարտաւորութեանց մէջ խարդախ է, երբ նա հայի մօտ է ծառայում: Բայց երբ նա ծառայում է թուրքի մօտ, իր պաշտօնը կատարում է ամենայն հաւատարմութեամբ: Նա հաւատարիմ է մնում ոչ միայն արդար աշխատութիւնների մէջ, այլ որքան ցած, որքան խղճի եւ ազնուութեան բնույթով եւս լինէին իր տիրոջ պահանջները, բոլորը նա նշտութեամբ կատարում է: Կ. Պոլսի համարեա բոլոր նշանաւոր մահմետական տներին սպասաւորները հայեր են. նրանք մինչեւ անգամ խառն են լինում հարեւական գաղտնիներին մէջ, եւ խաբուսների հաւատարիմ խորհրդակցաներն են դառնում: Փաշաների գանձապետները հայեր են, եւ նրանց կաշառակերութեան խիստ վարպետ հայրապետներն են լինում: Թողնեմ մասնաւորը, անցնեմ ընդհանուրին. մի գիւղ, որ բնակեցրած է ամբողջապէս հայերով, անելի բարձր գին ունի, քան թէ նոյն տարածութեամբ եւ նոյն բազմամարդութեամբ մի ուրիշ գիւղ, որ մահմետականներով էր բնակեցրած: Ինչո՞ւ: Որովհետեւ հայը հլու եւ արդիւնաւոր հպատակ է: Նա հլու է, երբ տէրն օտարազգի է, բայց եւ գիտեմ գիւղացիներ, որ վատ են վարում իրանց տիրոջ հետ, որովհետեւ նա հայ էր: Դա ինչի՞ց է:

Ասանը, որ բոլոր ժամանակը ուշադրութեամբ լսում էր, պատասխանեց.

- Պատճառը շատ պարզ է: Մեր ներկան, դուրս ինքնաբերաբար ասացիք որ մեր անցեալի շարունակութիւնն է: Այդ տխուր երեւոյթների պատճառները պետք է որոնեմք մեր տխուր պատմութեան մէջ...

Ծնած 1835ին, Պարսկաստանի Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղը, հանճարեղ վիպասան Րաֆֆի իւրապատուկ տեղ կը գրաւէ հայ գրականութեան մէջ: Իր ուսումնաստացած է Թիֆլիս, ուր մեկնած է 1847ին եւ տեղւոյն ուսական գիմնազիան ընդունուած է 1852ին: Այստեղ ան կը տիրապետէ ուսուցչութեան լեզուին: Կ'ուսումնասիրէ ուսական, եւրոպական ու դասական հին գրականութիւնը: Երևոյթով կը ճանչցուի որպէս հայ գրականութեան ակաւաւոր դէմքերէն մէկը: Րաֆֆի կը շրջի Արեւմտեան Հայաստանի գաւառները՝ Վան, Բա-

ղէշ, Մուշ եւ այլուր: Այս շրջապատոյններէն քաղած պատմա-ագատագրական հարուստ նիւթերը, ստացած խոր տպաւորութիւնները եւ հայ ժողովուրդի կենցաղային աւօրեային մօտէն ծանօթացումը յետագային արտայայտութիւն պիտի գտնէին ապագայ վիպագրի ստեղծագործութիւններուն մէջ:

Այսպիսի վէպերու կարեւորագոյններն են «Խենթը», «Սամուէլ», «Կայծեր», «Դաւիթ Բէկ», ուր կը մատուցուին հայութեան մէջ ծնունդ առած մարդկային բնազդներն ու մարդավայել կեանքի երազները, ազատութեան ձգտումն ու ազգային ազատագրական շարժումները եւ վերջապէս արդարութեան ի խնդիր յեղափոխական խմորումները: Իր ստեղծած կենդանի տիպարներու միջոցով, Րաֆֆի ձեւ ու կերպարանք կու տայ համայն հայութեան համար «ծրագիրը» մը որ կը նպատակադրէ վերջ տալ 19րդ դարու հայութեան կրած ճնշումներուն, հալածանքներուն եւ հարստահարութիւններուն:

Տիտանեան վիպասանը կը մահանայ 1888ին:

Րաֆֆի «Կայծեր»ը կոչած է «Ժամանակակից Վէպ», իրմէ եօթանասուն տարիներ առաջ Վասպուրականի մէջ պայքարող հայ դուկներու գործունէութեան վրայ հիմնուելով: Արծրունիները դաւաճանութեամբ Վասպուրականը սեփականացուցին 10րդ դարու սկիզբը երբ այնքան զօրացած էին որ Գագիկ Արծրունին ապստամբեցաւ Բագրատունեաց դէմ եւ արաբական ոստիկան Եուսուֆի մօտ գաւտնք գրաւարտելով ստացաւ արքայական թագը: Այս վէպի գործողութիւնները եւ յեղափոխական տիպարները վերցնուած են՝ Վասպուրական նահանգի մէջ վերջ յիշուած հայդուկներու շարժումէն մնացած ժողովուրդի յիշատակներէն:

«Կայծեր» վէպի գլխաւոր հերոսները, հայրենական տարբեր շրջաններ իրենց կատարած ուխտագնացութիւններով ազատագրութեան առաքեալներ են: Ասոնք կը նպատակադրեն ժողովուրդին մօտ տարածել հայրենասիրութեան ու պայքարի կայծերը եւ զայն նախապատրաստել գալիք ժողովրդային յեղափոխութեան:

Նոյնինքն հեղինակի ձեւակերպումով, «Ժամանակակից Վէպի» Րաֆֆիական ըմբռնումը հիմնուած է այն իրողութեան վրայ, որ «նա ամբողջում է իր մէջ այն բոլորը, ինչ որ հազարաւորները եւ միլիոնաւորներն են մտածում»: Նոյն միտքը կը զարգացնէ Ծիրվանզատէ երբ կը բացատրէ թէ Րաֆֆի ինքը խնդիրներ չէր յօրիններ, այլ միշտ կը ձգտէր լուծում տալ հրապարակի վրայ նոր գործնած եւ միտքերը յուզող խնդիրներուն:

Կեանքի առարկայական պատկերման աւելցնելով, Րաֆֆի կ'առաջադրէր գաղափարներ: Ան գրողը կը նկատէր «հասարակաց առաջնորդ» որ կոչուած է կանխատեսել գալիքը եւ ուրուագծել ժողովուրդի իտէալը:

Այսօր, իր մահէն 122 տարիներ ետք, հայ գրականութեան եւ հայ ժողովուրդի սիրտին մէջ Րաֆֆի կը մնայ մեծ վարպետը պատմավէպի, յեղափոխական խմորումներու եւ ժողովուրդի գիտակցութեան խթանումի: Իր գործերը միշտ կ'ըմբռնուին հեզասահ ըն-

թերցումով: Ընդգրկած նիւթերը մեզ կը տպաւորեն այնպիսի հրատապ այժմեականութեամբ որ կարծէք դեռ երէկ գրուած ըլլային: Րաֆֆիի գեղարուեստական բարձր արժանիքները, պատմական իրադարձութիւններու եւ տեղական բնապատկերներու նկարագրութեամբ առաւել եւս կը տպաւորեն ընթերցողը:

Նմուշ մը ահա - «Հնութիւնները դիտած ատեն տեսան Վարագայ կանաչազարդ լեռները, որոնց կուրծքի վրայ խորին ջերմեռանդութեամբ գրկուած, բազմել էր Վարագայ գեղեցիկ վանքը: Միւս կողմում, մանիշակագոյն հայելիի նման փայլում էր Վանայ ծովակը»: Կամ հետեւեալ պարզ դէպքը որ սակայն այնքան խօսուն է զգայնութեամբ եւ արտայայտչական ուժգնութեամբ -

Արտամեղում լինել եւ Արտամեղի հոտաւէտ, անուշահամ խնձորը չուտել, դա մի յանցանք է: Երբ պատրաստուեցանք մանապարհ ընկնելու, նկատեցի, որ մի փոքրիկ աղջիկ, մանապարհի եզրում մտած, իր առջեւ դրել էր մի մաղ լի խնձորներով: Եւ մօտեցայ:

- Ծախո՞ւմ ես:
- Նա զանգրահեք գլուխը շարժեց եւ, մտած տեղից չշարժուելով, նայեց իմ երեսին: Նրա թշնար կարմրեցան, ինչպէս իր առջեւ դրած խնձորները:
- Ո՞րքան արժէ:
- Հինգ փարա:
- Մաղն էլ հե՞տք:
- Ձէ՛, եւ էլ հետք:

Արտամեղուին ցոյց տուեց իր սրախօսութիւնը:

Հինգ փարա, գիտէ՞ք որքան է, երկու կոպեկ: Մի ամբողջ մաղ լի խնձորներով՝ երկու կոպեկ: Իմ թաշկինակը հագիւ կարողացաւ վերառնել կառորդ մասը, մնացածը թողեցի:

- Տո՛ւր նրան մի քան անելի, - ասաց Ասլանը, - երեսում է, որ շատ աղիւտ է այդ սիրուն աղջիկը: Երբ ստացաւ ինձանից մի արծաթեայ հինգ դուրուշանոց, մօտեցաւ Ասլանին, խնդրում էր նրա ձեռքը համբուրել:

- Մեր կողմերում տղամարդիկ են համբուրում աղջկայ ձեռքը, - ասաց Ասլանը եւ նրա ձեռքը սեղմեց իր շրթունքների վրայ:

Աղջիկը ժպտաց եւ շնորհակալութեամբ հետացաւ: Նրա գեղեցիկ մարմինը երեսում էր բրբրուած ցնցոտիների նեղքերից:

Եւ նայեցի Ասլանի տխրամած երեսին, եւ այդ երկրորդ անգամ էր, որ տեսնում էի նրա աչքերում եւ իր արտայայտած էի, որ ամենագեղեցիկ իշխանուհիների ձեռքը չէր համբուրի նա, իսկ այդ աղիւտ աղջիկը նրա սիրտը շարժեց:

Այստեղ որքան սէր ու գուրգուրանք կայ ժողովուրդի համեստ գաւառներուն հանդէպ -բան մը որուն նշույն իսկ չենք գտներ անկախ պետականութիւն խաղացող մերօրեայ իշխանութիւններու մօտ:

Րաֆֆիի «Կայծեր» վէպի մեր այս կարճ ոգեկոչումը չնչին փորձ մըն է ներկայացնելու այն ակնբախ գուգահեռները որոնք կան այդ տխուր ժամանակներու եւ մեր ապրած դժբախտաբար նոյնքան տխուր օրերու միջեւ:

Որքան օգտակար պիտի ըլլար հայկական վարժարաններու ուսումնական ծրագիրներուն մէջ, հայոց պատմութեան որպէս լրացուցիչ նիւթ, ընդգրկել Րաֆֆիի գործերուն ընթերցումը:

ՍԱՐՁԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ ԴԱՅԱՍՏԱՆ՝ Բ. ԽՄԲԱԿԻՆ ՄԵՋ

Հայաստանի հաւաքականը հանդէս կը գալ 2-րդ ընտրական խմբում, որտեղ մեր թիմի մրցակիցները կը լինեն Ռուսաստանի, Սլովաքիայի, Իրլանտայի, Մակեդոնիայի, Անտորրայի ընտրանիները (ի դէպ, սկզբում մեր հաւաքականը ընդգրկուեց 1-ին խմբում, բայց քանի որ այդ խմբում նախապէս յայտնուել էր Ատրպէյճանի ազգային թիմը, ՌԻԵՖԱ-ն Հայաստանին ինքնաբերաբար տեղափոխեց յաջորդ խումբ):



Մեր հաւաքականը նախկինում արդէն հանդիպել է Ռուսաստանի, Մակեդոնիայի, Անտորրայի հետ: Ռուսները հետ անցկացրած երկու խաղերում էլ մեր ֆուտբոլիստները պարտութիւն են կրել: Մակեդոնացիները հետ մերոնք հանդիպել են 4 անգամ, որից առաջինում ոչ-ոքի են խաղացել, երկրորդում յաղթել, իսկ վերջին երկու խաղերը տանուլ տուել: Անտորրայի ազգային թիմի հետ անցկացրած 6 հանդիպումներից 5-ում Հայաստանի հաւաքականը յաղթել, իսկ մէկն աւարտել ոչ-ոքի: Սլովաքիայի եւ Իրլանտայի թիմերի հետ մեր հաւաքականն առաջիկայի հանդիպել, այդ թւում ընկերական մակարդակով: Նշենք, որ Ռուսաստանի հաւաքականին այժմ մարզում է հոլանտացի հանրայաւ մասնագէտ Գուս Հիդինկը, իսկ Իրլանտային՝ իտալացի Ջիովանի Տրապատտին:

Եւրո-2012-ի ընտրաշաւը կը մեկնարկի այս տարուայ Սեպտեմբերին, իսկ կ'աւարտուի 2011 թ. Նոյեմբերին:

Առաջնութեան մրցակարգով եզրափակիչ փուլի ուղեգրեր կը նուաճեն ընտրական խմբերի յաղթողները, 2-րդ տեղը գրաւած հաւաքականներից լաւագոյն ցուցանիշ ունեցող թիմը, ինչպէս նաեւ անցումային 4 հանդիպումների յաղթողները (վերջինիս կը մասնակցեն խմբերում 2-րդ տեղերը գրաւած մնացած 8 ընտրանիները):

Ահա վիճակահանութեան լրիւ արդիւնքները.

- Ա. խմբակ.- Գերմանիա, Թուրքիա, Աւստրիա, Պելճիքա, Ղազախստան, Ատրպէյճան:
- Բ. խմբակ.- Ռուսիա, Սլովաքիա, Իրլանտա, Մակեդոնիա, Հայաստան, Անտորրա:
- Գ. խմբակ.- Իտալիա, Սերպիա, Հիւսիսային Իրլանտա, Սլովենիա, Էսթոնիա, Ֆարո կղզիներ:
- Դ. խմբակ.- Ֆրանսա, Ռումանիա, Պոսնիա-Հերցեգովինա, Պիլժուոսիա, Ալբանիա, Լիւքսեմպուրկ:
- Ե.- խմբակ.- Հոլանտա, Շուէտ, Ֆինլանտա, Հունգարիա, Մոլտաւիա, Սան Մարինո:
- Զ. խմբակ.- Խրուսթիա, Յունաստան, Իսրայէլ, Լատվիա, Վրաստան, Մալթա:
- Է. խմբակ.- Անգլիա, Զուիցերիա, Պուլկարիա, Կալէս, Մոնթենեկրո:
- Ը. խմբակ.- Փորթուգալ, Դանիա, Նորվեկիա, Կիպրոս, Իսլանտա:
- Թ. խմբակ.- Սպանիա, Չեխիա, Սկոտլանդ, Լիթուանիա, Լիխտենշթայն:

ՈՒՐՈՒԿՈՒԲԱՅԱՅԱՅ ՖՈՒԹՊՈՒԼԻՍ ԽՈՍԿԻՆ ԲՈՂՈՍԵԱՆԸ ԵՐԿԸՏՐԱՆՔԻ ԱՌՋԵՒ Է

Արժեքները, Նուրի Օլտ Պոյզ ակումբի ուրուկուայահայ ֆուտբոլիստ, Հայաստանի ֆուտբոլի Ազգային Հաւաքականի թեկնածու Խոսկին Բոգոսեանը դեռ չի պատասխանել ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից իրեն արդէն վաղուց արած առաջարկին՝ ընդգրկուել ՀՀ ֆուտբոլի հաւաքականի կազմում եւ, ըստ ամենայնի, դեռ որոշում չի կայացրել: Ինչպէս, Արմենայրէս-ին տեղեկացրին ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայում, Խ. Բոգոսեանը նաեւ Ուրուկուայի ֆուտբոլի Ազգային Հաւաքականի թեկնածու է եւ, եթէ Ուրուկուայի հաւաքականի գլխաւոր մարզիչ Օ. Տաբարեսը նրան հրաւիրի իր թիմի կազմը, ապա հայազգի ֆուտբոլիստը կը մասնակցի 2010 թուականին Հարաւային Աֆրիկայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնութեանը Ուրուկուայի թիմի կազմում:

ԴԱԻԹ ՇԱՐԻՆԵԱՆԸ՝ ՄՈՍԿՈՒՅԻ ՇԱԽՄԱՏԻ ԲԱՅ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՅԱՂՈՂ

Տասնվեցամեայ վանաձորցի շախմատիստ Դաւիթ Շահինեանը, վաստակելով 8,5 միաւոր 10 հնարաւորից, դարձաւ Մոսկուայում աւարտուած Մոսկուայի շախմատի միջազգային բաց մրցաշարի, Բ. խմբի միանձնեայ յաղթողը: Վերջին փուլում ոչ ոքի խաղալով՝ նա իրեն ապահովեց միանձնեայ յաղթանակն այս մրցաշարում: Այս մասին Արմենայրէս-ին այսօր տեղեկացրին ՀՀ շախմատի ֆեդերացիայում:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863
 massis2@earthlink.net

ԵՐՈՒԽԱՆ

Շարունակուած էջ 16-էն

Ինամում է իր թոռներին՝ ապագայում վերընթիւղուող հայրենիքի ուժը հզորացնելու համար: Մեր հայուհու երակներում հոսում է հայ ժողովրդի կենսապարգեւ արիւնը, որի ուժը աներեւակայն լիօրէն հզոր է: «Կնոջ այս վսեմ տիպարին առջեւ պաշտամունքով խոնարհինք, վասնզի այն իր ծոցին մէջ անշէջ պիտի պահէ հուրը, որ ազգերու կեանքը կ'ապրեցնէ»: Այս խօսքերով է Երուխանն աւարտում պատմուածքը:

Հայ գաղթականների կեանքը պատկերող ուշագրաւ գործերից են նաեւ «Օղորմութիւն մը...», «Երեք ամսուայ սուգ», «Սայլորդը», «Ինքնօգնութիւնը փոքրիկներուն վրայ» նովելներն ու պատմուածքները եւ «Գաղթականները» անաւարտ վէպը:

Իր մի շարք նովելներում Երուխանը դիմակագերծ է անում «սրտի դողով իր միլիոնները հաշուող» (Գոգոլ) 19րդ դարի դրամաշուրթութիւնը: Դրամատիրական դարաշրջանի նրա ազահ հերոսները հարստանալու համար ոչնչի առջեւ կանգ չեն առնում: Երուխանը մեծ վարպետութեամբ ընթերցողին տեղափոխում է այն միջավայրը, որտեղ բուրժուազիան, Մարքսի եւ Էնգելսի կլասիկ բնորոշմամբ, «մարդկանց մէջ միայն մի կապ էր թողնում» մերկ շահ, անսիրտ կանխիկ հաշիւ»: Այս թեման շոշափող նրա գործերը պատուում են բուրժուական հասարակարգի դիմակը:

- Մօ, Մկրտիչ, միտքս անանկ բան մը ինկաւ քի, էջեր ըսեմ նէ, շատ քեֆդ պիտի գայ...
- Փարայի՞ պան է...
- Հէլպեթ, անանկ չըլլայ նէ, քեզի կ'ըսե՞մ... հէլպեթ փարայի պան է...
- Աման, չապուխ ըսէ, Սերոբ»:

Այսպէս է սկսում Երուխանի «Վարձու տուն» նովելը: Դժուար չէ կուսել դրամամոլութեան խնթացնող մոլուցքը, որ բխում է առաջին իսկ տողերից, մոլուցք, որ դիւային կերպով գործը մղում է այնտեղ, որ հարազատ տատիկը, որին թոռները ձգտում են հանել տանից եւ տունը վարձով տալ ուրիշներին, իր օճախը կորցնելու ռեալ վտանգից ահաբեկուած, հրդեհում է սեփական տունը, օճազալար բոցերի մէջ ողջակիզուած՝ յաւերժական նգովքի ենթարկելով դրամամոլութիւնից կուրացած թոռներին:

REQUEST FOR PROPOSALS (RFP) NO. 7526
LEGAL SERVICES
 The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified law firms to provide legal services. The work to be accomplished will consist of on-call legal services related to all legal issues of the Authority, including, but not limited to: labor and employment, real estate, asset management, governmental regulations, housing bonds (including multi-family and single family bonds) and other related legal matters. Copies of the RFP may be obtained beginning February 1, 2010 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., March 5, 2010.
 2/11/10
 CNS-1787034#
 MASSIS WEEKLY

«Հուրութեամբ» պատմուածքի հերոսը՝ Հրանդը, կողոպտուած է իր երբեմնի ընկերներից, որոնք յետագայում այլեւս չեն ուզում ճանաչել այժմ արդէն աղքատութեան դուռը հասած իրենց ազնիւ ու առատաձեռն ընկերը, որի ոսկիներով են հարստացել իրենք: Ղուկաս Կիրուկեանը իր ստացած բազմաթիւ ոսկիների դիմաց, ծառայի ձեռքով, Հրանդին ուղարկում է 5 դրուշնոց, ինչպէս մուրացկանին նետուած ողորմութիւն: Ողորմաբար շարտուած արծաթ դրամը վերջնականապէս կտրուած է Հրանտի հաւատը մարդու նկատմամբ: Այնուհետեւ նա կասկածում է բոլորին վրայ: Նրա համար ազնիւ մարդ այլեւս գոյութիւն չունի: Իսկ արծաթ դրամը ինամում քով պահում է վզից կախուած թիթեղեայ տուփի մէջ, որպէս հուրութեամբ, հմայանք՝ կախարդանքի ու գաղթականութեան գապաշապիկ, որին ստեպ-ստեպ նայում է, գոչելով. «Հո՛ս է, հո՛ս, ամբողջ մարդկային բարոյականը հո՛ս է»:

Կողեռնիկու էֆենտին («Քաւութիւն») մի կատարեալ վամպիր է: Ոսկու փայլը շլացրել է նրան, ամայացրել հոգեկան աշխարհը: Դրամի նկատմամբ ունեցած անյազուր ծաւալը նրա աչքերի առջեւ անէացրել է բոլոր տեսակի սրբութիւնները: Էֆենտին իր հարազատների դիմանքի վրայոց հեւասպառ սողում է դէպի իր գերագոյն իտէալը՝ ոսկին: Նրա անմեղ գոհերը մի ամբողջ եղբայրական գերեզման են կազմում:

Երուխանի այս շարքի նովելներից մէկը կրում է «Մրցում» վերնագիրը, որ վերին աստիճանի բնորոշ է նկարագրուող դարաշրջանի համար: Ուշագրաւ է նաեւ, որ Երուխանը «Մրցում»ը ներկայացնում է «Ժամանակակից բարքեր» ենթավերնագրով:

REQUEST FOR PROPOSALS (RFP) NO. 7527
RENT REASONABLENESS DATA PROVIDER
 The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in populating its existing rent comparables database with new data on a quarterly basis. The firms will need to determine the number of rent comparables that will adequately represent fair market rents in the local market and each sub-market area. This number shall allow the Authority to determine reasonable rents for over 40,000 existing Section 8 contracts. The work to be accomplished includes collecting data for the Housing Authority's rent comparable database by conducting surveys of the local unassisted rent market and addressing the characteristics of the units such as unit type, size, location, age, quality, amenities, housing services, maintenance, and utilities. Copies of the RFP may be obtained beginning February 8, 2010 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., March 12, 2010.
 2/11, 2/18/10
 CNS-1790181#
 MASSIS WEEKLY

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸԱԻԱՏՈՅ ԸՆԵՊԱՆԱԿԸ

Շարունակում է 8-էն

Մէկ է ու բոլորին կը պատկանի: Ուրիշ եկեղեցի չկայ, բացի անկէ որ Քրիստոս հիմնեց Սուրբ Հոգիի ներգործութեամբ: Կը հաւատանք որ ան ԸՆԴՀԱՆՐԱՍՏԱՆԵՆ ԵԿԵՂԵՑԻ Է, այսինքն բոլորին կը պատկանի եւ ոչ թէ մէկ ազգի կամ մէկ երկրի միայն, այլ տիեզերական է՝ բոլորին կը պատկանի հաւասարապէս ու բոլորին կը ծառայէ աշխարհի վրայ որպէս Քրիստոսի Մարմինը: Կը հաւատանք որ Եկեղեցին ԱՌԱՔԵՆԱԿԱՆ է, այսինքն հիմնուած ըլլալով Քրիստոսի կողմէ, սարածուեցաւ իր անմիջական Առաքեալներու քարոզութեամբ, եւ ոչ թէ ուրիշ աշակերտներու կողմէ: Եկեղեցին Քրիստոսի ձեռքով Առաքեալներուն յանձնուեցաւ, եւ Առաքեալներն ալ երկիրէ երկիր գացին ու քարոզեցին ճիշդ այն ինչ որ Քրիստոս քարոզած էր: Այս իմաստով է որ Եկեղեցին Առաքելական կը դառնանք: Կը հաւատանք որ Եկեղեցին ՍՈՒՐԲ է, այսինքն մաքուր է եւ գտնուած ուրիշ ամէն հաստատութիւններէ, եւ թէ ան է միայն որ կը մնայ որպէս Աստուծոյ եւ Սուրբ Երրորդութեան բնակարանը երկրի վրայ:

«ՄԿՐՏՈՒԹԻՒՆ, ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ, ԳԱՆՈՒՍ»

Կը հաւատանք ՄԿՐՏՈՒԹԻՒՆ որպէս Չուրով լուսացման եւ Ս. Հոգիով վերատին ծնունդի խորհուրդ որուն Տէրը Յիսուս ինքզինք ենթարկեց Յորդանան գետին մէջ մկրտուելով: Մկրտութեան պահուն Սուրբ Հոգին իջաւ Յիսուսի վրայ եւ Հայր Աստուած երկինքէն վկայեց իր Որդիին մասին: Իր մկրտութեան որպէս իսկական շարունակութիւնը Եկեղեցին կը հաւատայ անոր կենսունակութեանը որպէս նախադուռը Եկեղեցւոյ: Մկրտութեամբ եւ վերածնունդով երախան եւ կամ չմկրտուած անձը մուտք կը գործէ Քրիստոսի Եկեղեցիէն ներս ու կը մնայ հոն որպէս իսկական անդամը Քրիստոսի Մարմինին: Կը հաւատանք ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ, որ մեր մեղքերէն ու սխալներէն ետ վերադառնալու ու Եկեղեցիէն ներս մտնելու արժանի ըլլալու միջոցն է: Կը հաւատանք նաեւ Քրիստոսի ԵՐԿՐՈՐԴ ԳԱՆՈՒՍՏԻՆ գործի Յիսուս խոստացաւ իր հետեւորդներուն, եւ որուն համար կրկնակի պատուիրեց «միշտ պատրաստ ըլլալ»:

«ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ԶԱՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ»
Կը հաւատանք ՄԵՌԱԾՆԵ-

ՐՈՒ ԶԱՐՈՒԹԵԱՆ, այսինքն անոնք որոնք Քրիստոսի անունով ննջած են յարութիւն պիտի առնեն ինչպէս Քրիստոս յարութիւն առաւ իր գերեզմանէն: Կը հաւատանք որովհետեւ Քրիստոս ըսաւ թէ ես եկայ ձեզի կեանք եւ առաւել եւս կեանք տալու: ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ եւս կը հաւատանք քանի որ երկրի վրայ մարդիկ մեղաւոր կեանք կ'ապրին, եւ անոնք որոնք Քրիստոսով իրենց կեանքը առաջնորդած են ու Աւետարանին հետեւած, անոնք արդարութեամբ պիտի դատուին ՎԵՐՁԻՆ ՕՐԸ: Կը հաւատանք նաեւ ԵՐԿՐԻԹԻԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ եւ ԶԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ:

ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ ՎԵՐՁՆԱԿԱՆ Է

Նիկիոյ 325 թուականի Հանգանակը յաջորդող երկու Տիեզերական ժողովներու ընթացքին անփոփոխ հաստատուեցաւ եւ եղաւ բոլոր ժամանակներու բոլոր եկեղեցիներուն Հանգանակը: Դիմացաւ դարեւոր ընթացքին տեղի ունեցած եկեղեցիներու ալիքային բաժանումներուն եւ տարակարծիքներուն, մնալով միշտ Արեւելեան եւ Արեւմտեան հնաւանդ եկեղեցիներու հաւատքի անխախտ հիմը, որուն դիմաց մերժուեցան ու հերքուեցան ամէն տեսակի սխալ ուսուցումներ, մասնաւորաբար վերջին դարերուն երբ Աւետարանի անունով աղանդաւորներ մերժեցին Եկեղեցւոյ իսկական «Հաւատամք»ը եւ աղարտեցին Աւետարանական ճշմարիտ ուսուցումները: Հաւատոյ Հանգանակը ամենօրեայ «խոստովանանք» մըն է գոր հաւատացեալներ կ'արտասանեն միաբերան, առանց որուն ոչ մէկ խորհուրդ կը կատարուի եկեղեցիներէն ներս:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Հայ Եկեղեցւոյ ժամագիրքին սկիզբը կայ նաեւ աւելի ընդարձակ Հաւատոյ Հանգանակ մը որ գրուած է 14-րդ դարու մեր մեծ վարդապետներէն Ս. Գրիգոր Տաթևացիի կողմէ գոր պատրաստեց քահանայն կը կարգայ առաւօտ կանուր՝ Գիշերային ժամերգութեան սկիզբը: Տաթևացիի «Հաւատամք»ը հիմնականին մէջ նոյնն է Նիկիական Հանգանակին հետ, ոչ մէկ փոփոխութեամբ, այլ միայն յաւելեալ բացատրական նշումներով: Տաթևացիի Հանգանակը Հայ Եկեղեցւոյ յատուկ է, մինչդեռ Նիկիականը՝ բոլոր եկեղեցիներուն համար է: Պաշտօնական Հանգանակը 325 թուականի Նիկիական խմբագրութիւնն է:

րուծ: Տանուկութեանը դարու սկսուելու եւ այնուհետեւ շարունակուել որպէս սովորութիւն դառնալ՝ ընկերների ու սիրահարների միջեւ փոխանակելու նուէրներ ու գրաւոր ողջոյններ: Սակայն միայն նոյն դարի վերջում սկսուել է տպագիր բացիկների փոխանակելը: Ամերիկայի Միացեալ Նահանգներում պատրաստի բացիկները դիւրին միջոց են եղել իրենց զգացումները արտայայտելու, քանի որ այն հեռավոր ժամանակներին անձնական զգացումները ուղղակի արտայայտելը քաջալերուած չի եղել: 1840-ական թուականներին սկսել էին վաճառուել զանգուածային արտադրութեան առաջին «Վալենդայն» ողջոյնների բացիկները: ԱՄՆ-ում, Վալենդայնի

«ՎԱԼԵՆԴԱՅՆ» VALENTINE

Շարունակում է 13-էն

գարնան պաշտօնական սկիզբն էր նկատուել եւ համարուել էր մաքրագործութեան պահ: «Լուբերկուլիէս»-ը, որը սկսուել էր Փետրուարի 15ին, պտղաբերութեան խրախմանքի օրն էր եղել, նուիրուած Հռովմի երկրագործութեան Ֆաունուս աստուծուն, ինչպէս նաեւ Հռովմի հիմնադիրներ՝ Ռոմուլուսին ու Ռէմէսուսին:

Հռովմի ձիւսսիուս Պապն է եղել, որ մեր թուարկութեան 498 թուականին, Փետրուարի 14-ը յայտարարել է վալենդայնի տօնակատարութեան օր:

Անգլիայում վալենդայնի օրը համաժողովրդականօրէն սկսուել է տօնախմբուել տասնըօթերորդ դա-

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

Շարունակում է 5-էն

րից: Նրանք են, - Արդեօք մենք որ քանով ենք, կարողանում Հայ Ազգային Կոնգրեսի ներսում օրինապահութիւնն եւ ժողովրդավարութիւնն հաստատել, որից յետոյ այն պահանջները բիրտ անօրինապահ իշխանութիւննից:

- Քննադատութեան կամ ինքնաքննադատութեան սահմանը որոշուած է, թէ արդեօք մինչեւ որտեղ է այն համարուած կառուցողական, թէ ամէն տեսակ քննադատական խօսք համարուելու է ՀԱԿ-ին ողողուած դաւաճանական քայլ:

- Պէտք է հասկանալ որ ՄԴՀԿ-ը ինտեգրուել կարող է յանուն վեճ գաղափարների իրականացման, բայց ձուլուել երբէք: 20-րդ դարի սկիզբներին Կոմիտեանի վեհաժողովին մասնակցելիս, ժամանակի հսկան «Կոմկուսը» ջանքեր չի նախաձեռնում: Այս միաձուլման հեղինակները մոռացել էին, որ Հնչակեան կուսակցութեան համար համաշխարհային հասարակութեանը խոստացուող «Մարքսիզմի դրախտ»ը սին պատրանք է, եթէ այդ հասարակութեան գազանաբարոյ անդամը չի պատժուել, չի խոստովանել եւ յանցանքի վնասը չի հատուցել: Դա վրիժառուի կոնսեպտ չէ, այլ մարդկութիւնը յետազույժում նման աղէտներից փրկելու եւ մարդուն մարդավայել կեանք ապահովելու կոնսեպտ է:

- Արդեօք կարողանում ենք տեսնել այն իրողութիւնը որ խօսքի ազատութեան կարգախօսի ներքոյ գործող, անգամ ընդդիմադիր մամուլը, շատ յաճախ ցեղարձակութեամբից աւելի շատ սեփական շահն են փորձում կորզել, քան թէ լրատուութիւնն է եւ լրատուական բարոյական նորմերի պահպանումը: Իհարկէ այս դէպքում էլ քարոզչամեքենան կառավարելի դարձնելու խնդիրը խօսքի ազատութեան սահմանափակման մի նոր խնդիր է հարուցում:

- Առաջին հայեացքից մանր թուացող այս խնդիրները, իրենց հոլթեամբ արմատական առողջ ընդմուտութեան հիմքի անկիւնաքարն են հանդիսանում: Դա նշանակում է որ Ընդդիմադիր դաշտի առանցքային ուժը հանդիսացող ՀԱԿ-ը պէտք է կազմաւորման ողջ ընթացքում պետական կառուցների մոդելաւորման, բովանդակային առումով կատարելագործման եւ նրանց փոխկապակցման ճարտարապետը դառնայ: Սա Ընդդիմադիրի առաքելութեան ամենայն պատասխանատու հատուածն է: Շատ կարեւոր է որ կատարելագործման պրոցեսի անընդհատութիւնը պահպանուի, անկախ այն բանից թէ հասունացել է արդեօք, ժողովրդի աստղային, իսկ իշխանութեան օրհասական պահը թէ ոչ: Չմոռանալ այն կանոնը թէ որքան հասարակու-

թեանը տալիս ես դրական էներգիա, աւելին ստանում ես ժողովուրդից:

- Հայ Ազգային Կոնգրեսի հզօրացումը անհրաժեշտ է, Երկիրը կեղեքող իշխանական բուրգը կազմաքանդելու համար, սակայն Լ. Տ. Պետրոսեանի վառ անհատականութիւնը միայնակ չի կարող նրա գրաւականը լինել: Անհրաժեշտ է թիմային այնպիսի համակարգուած աշխատանք, որ Ընդդիմադիր ճամբարում ներգրաւուած բոլոր քաղաքական ուժերը եւ անհատները կարողանան նպատակասլաց եւ արդիւնաւէտ ներդրեն իրենց հնարաւոր առաւելագոյնը:

- Հայաստանի իշխանութիւնները ջանք չեն խնայում ընտրապրոցեսները բռնութեան եւ կեղծիքի միջոցով կառավարելի դարձնելու ուղղութեամբ, որտեղ ժողովրդի ձայնը դառնում է, Ձայն բառաբարոյ յանապատի:

Նիկոլ Փաշինեանի ընտրութիւնը հ 10 ընտրատարածքում լոյս սիրեց, բռնարարքի մի նոր մարտավարութեան, դա այն է ինչ կարելի է անուանել «անցանկալի ակտիւ» ընտրազանգուածին պատկանող ամէն գնով: Որտեղ ընտրող վախի մտնուրտում բախումներից խուսափելու համար չի մասնակցում ընտրութեան: Չնայած հասարակական կարծիքը բռնացողի օգտին չէ:

Բռնութիւններից ու անարդարութիւններից հիասթափուած զանգուածի միջոցով հնարաւոր է, հանրահաւաքային բողոքի մեծ ալիք բարձրացնել, սակայն գրանցուած է կեղծիքի եւ բռնութեան մի «նոր յաղթանակ», երեւոյթ որը Երկիրը կրկնակի հեռացնում է ժողովրդավարութիւնից եւ մարդավայել ապրելու հնարաւորութիւնից:

Իշխանութիւնների լեգիտիմութեան պակասը, իր հերթին հերթական փորձանքներն է բերում արտաքին յարաբերութիւնների, Ղարաբաղի հարցի եւ Յեղասպանութեան ճանաչման խնդրի շուրջ:

Առջեւում է Մարտի 1-ը, Գարնան գարթօնքի այն օրը, որ Հայ ժողովրդի յիշողութեան մէջ գրանցուել է Հայաստանի իշխանութիւնը բռնութեամբ զաւթած վարչախմբի արիւնալի հաշուեյարդարի օր:

Ղարաբաղեան պատերազմի ազատամարտիկները, խաղաղ ցուցարարների հետ դեռ հիւժուում են բանտերում:

Ելնելով ծառայած խնդիրների լուծման, եւ հրամայականների անհրաժեշտութիւնից յորդորում ենք ընդդիմադիր դաշտի բոլոր Հայրենասեր ուժերին վեր կանգնել ներկազմակերպական եւ միջկազմակերպական երկրորդական խնդիրներից, մէկտեղուել, խիզախել, նուիրուել եւ միանալ այն ալիքին որը կոչուած է մաքրելու եւ դուրս նետելու Ազրեան աղբը երկրից, Համակարգային արմատական վերափոխումներով, ամենայն Հայոց Հայրենիքը արժանավայել երկիր դարձնելու համար:

ամէն տօնի ժամանակ մէկ երկիր լինոն «Վալենդայն» բացիկներ են վաճառուում, որը երկրորդ ամենաշատ բացիկներ վաճառուելու տօնակատարութեան օրն է, իսկ Քրիստոսի

Մննդեան տօներին վաճառուում են 2.6 երկիր լինոն բացիկներ: Վաճառուած «Վալենդայն» բացիկների մօտաւորապէս 85 տոկոսը գնուում է կանանց կողմից:

EVERY DAY LOW PRICES

Unbeatable deals! Huge selection!

1800 Tequila Reposado or Silver \$16⁹⁹ 	Absolut Vodka \$13⁹⁹ 	Remy Martin VS Cognac \$20⁹⁹ 	Remy Martin VSOP Cognac \$29⁹⁹ 	Remy Martin XO Cognac \$94⁹⁹ 
Grey Goose Vodka \$21⁹⁹ 	Russian Standard Vodka \$10⁹⁹ 	Putinka Vodka \$8⁹⁹ 	Ciroc Vodka \$16⁹⁹ 	Stolichnaya Elit Vodka \$40⁹⁹ 
Hennessy VS Cognac \$20⁹⁹ 	Hennessy VSOP Cognac \$32⁹⁹ 	Cazadores Reposado Tequila \$19⁹⁹ 	Sauza Tequila Gold or Blanco \$7⁹⁹ 	Frida Kahlo Blanco Tequila \$27⁹⁹ 
Frida Kahlo Reposado Tequila \$39⁹⁹ 	Dewar's 12 Years Whisky \$16⁹⁹ 	Don Julio 1942 Tequila \$77⁹⁹ 	Patron Silver Tequila \$29⁹⁹ 	Johnnie Walker Gold Label \$44⁹⁹ 
Johnnie Walker Blue Label \$114⁹⁹ 	Johnnie Walker Black Label \$18⁹⁹ 	Jack Daniel's Old No.7 Whiskey \$14⁹⁹ 	Jacques Cardin VSOP Cognac \$15⁹⁹ 	Tres Generaciones Anejo Tequila \$29⁹⁹ 
Tres Generaciones Blanco Tequila \$27⁹⁹ 	Cabo Wabo Tequila Silver \$19⁹⁹ 	Crown Royal Canadian Whisky \$13⁹⁹ 	Chivas Regal 12 Years Whisky \$15⁹⁹ 	Putinka Vodka Limited Edition \$24⁹⁹ 
Gantous & Abou Raad Arak \$11⁴⁹ 	Johnnie Walker Black 100th Anniv. \$39⁹⁹ 	Severka Luxe Vodka 1.0L \$7⁹⁹ 	D Los Altos Silver Tequila \$14⁹⁹ 	El Charro Reposado Tequila 1.0L w/ free 375ml \$19⁹⁹ 
Chaya Silver Tequila \$19⁹⁹ 	Nemiroff Lex Vodka \$25⁹⁹ 	Grand Old Parr 12 Years Whisky \$29⁹⁹ 	Ruskova Vodka 1.75L \$14⁹⁹ 	Noy 7 Years Armenian Brandy \$21⁹⁹ 
Robert Mondavi Private Selection Cabernet Sauvignon \$6⁹⁹ 	X-Rated Liqueur \$14⁹⁹ 	Vernashen Semi-Sweet Wine \$5⁹⁹ 	Finlandia Vodka \$14⁹⁹ 	Tisdale Assorted Varietals \$1⁹⁹ 
Jermuk Armenian Mineral Water 500ml 89¢ 	Gerolsteiner Natural Mineral Water 1.0L 89¢ 	Heineken 12-Pack (12 Fl. Oz. Bottles) \$11⁹⁹ 	Corona Extra 12-Pack (12 Fl. Oz. Bottles) \$11⁹⁹ 	Carlsberg 12-Pack (12 Fl. Oz. Bottles) \$10⁹⁹ 

1785 E. Washington Blvd.
 Pasadena, CA 91104
 (626) 794-7026
 Open Monday—Saturday
 9 am - 8 pm



825 W. Glenoaks Blvd.
 Glendale, CA 91202
 (818) 242-0683
 Open Monday—Saturday
 9 am - 8 pm

*This ad expires on 02/27/10 • 12 or more bottles Mix & Match • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CCs
 All items are 750ml in size unless specified.